

ՀՐԱՊԵՐԱԿՈՒՄԵՐ ԵՎ ՀԱՊՈՐՊՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ԾԱՆՔԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍՏ. ԼԻՍԻՃՑԱՆԻՆ՝

Լևոն Ծանթի և Ստ. Լիսիցյանի բարեկամությունը սկիզբ է առել Գևորգյան ճեմարանից: 1889-ին արդեն ճեմարանի ուսուցիչ Լիսիցյանի և իրեն գրեթե տարեկից լսարանցիների միջև «արտագին մտերմություն» է ստեղծվում: Այդ օրերն հիշելիս Լիսիցյանը գրել է. «Միտում էր առանձնակի բարձրաձայն արտասանել իր գրածը Լևոն Սեդրուսյանը (ապագա Ծանթը)»¹: Հուշագրողը նույն տեղում նկատում է, որ ճեմարանի ոտանավոր գրող լսարանցիների մթնոլորտը բռնվել էր Թումանյանով. նրա նոր լույս տեսած ժողովածուի (Լիսիցյանն է ճեմարան տարել) պատճառած խանդավառությունը համընդհանուր էր:

Այստեղ արդեն կարելի է տեսնել մտավորական եռյակի՝ Թումանյան, Լիսիցյան, Ծանթ, ապագա խոր մտերմության և երկարամյա համագործակցության նախադրյալները, քանի որ արտահայտվել են նման հարաբերությունների անհրաժեշտ պայմանները՝ «արտակցություն և գործի սեր» (Ծանթի արտահայտությունն է):

Այդ օրերից մոտ հինգ տարի անց՝ 1896-ին, Եվրոպայում ուսանող, արդեն քանաստեղծի ու արձակագրի ճանաչում ստացած Լևոն Սեդրուսյան—Ծանթը իր առաջին նամակներն է գրում ուսուցիչ-բարեկամին:

Նույն՝ 1896-ին, Կ. Պոլսում սանձազերծված հայկական կոտորածների հետևանքով Ծանթը գրկվել էր հարազատների օգնությունից, թաղվել պարտքերի մեջ և կանգնել ուսումը թողնելու հարկադրանքի առջև: Անելանելի այդ պահին նա որոշում է դիմել այնքան ոռոմանտիկ մտերմությանը կապված բարեկամին... Ծայր աստիճան կաշկանդվածությունն ու լարվածությունը զգացվում է նամակի յուրաքանչյուր բառից: Երևում է միաժամանակ, որ ճեմարանական փոխհարաբերությունները հետագայում որոշ խորացում են ապրել. Ծանթը այցելել է Լիսիցյանին, գիտե նրա ընտանիքը:

Լիսիցյանը, կարելի է ասել՝ իր տաղանդավոր բարեկամին օգնելու իսկական արշավ է ծավալում: Ծուռով երիտասարդ գրողը թեթև շունչ է քաշում և լծվում «աշխատության»: Լիսիցյանի շնորհիվ Ծանթի կենսագրության մեջ են մտնում հայ գրականությանը թանկ ծառայություն մատուցած բարերարների անուններ՝ Զոհրաբյան, Ղամբարյան... 2ի ուշանում և Ծանթի երախտագիտական խոսքը Լիսիցյանին. «Ես քու շնորքովդ է, որ հիմա Եվրոպա եմ»:

Գնալով Ծանթի և Լիսիցյանի փոխհարաբերությունները խորացել են և, աշխատանքային տևական գործակցությամբ, վերանել հազվագյուտ բարեկամության: Այդ մտերմության պերճախոս վկայություններից են Լիսիցյանին հասցեագրված մեծաթիվ այն նամակները, որ ներկայումս պահվում են Հայաստանի պետական պատմական արխիվում: Դրանցից առաջինը գրվել է 1896 թ. օգոստոսի 25-ին, իսկ վերջինը՝ 1917-ի դեկտեմբերի 7-ին: Մշակութային խոշոր արժեք ունեցող այդ նամակներից, որ պատրաստ են հրատարակության, «Բանբերի» ընթերցողներին ներկայացվում են 1914—1917 թթ. գրվածները՝ տեղի նկատառումով դուրս թողնելով մի քանիսը*:

Մեծ է հրատարակվող նամակների նշանակությունը ոչ միայն Լ. Ծանթի կյանքն ու գործը, այլև հայ դրամատուրգիայի ու թատրոնի, հայ հոգևոր մշակույթի պատմությունը հետազոտելու առումով: Սրանցում, ի տարբերություն «հայամավորքի ծավալ ընդունող»²

¹ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Ե., 1969, էջ 347:

² Նման մի նամակ հրապարակել ենք «Դպրություն» շաբաթաթերթի 1991 թ. նոյեմբերի 29-ի համարում:

* Տպագրվում են ուղղագրական և կետադրական աննշան միջամտությամբ:

այն նամակների, որ հանգամանորեն քննարկվում են «Լուսաբերի»³ կառուցվածքը, մե-
թոդա-մանկավարժական սկզբունքները, դասագրքի մասին խոսվում է անցողակի:

Ներկայացվող առաջին իսկ նամակում Ծանթը խոսում է իր հույսոված երկի՝ «Հին
աստվածների» բեմադրման ու բերած եկամտի մասին, իսկ վերջիններից մեկում տեղ է
գտել մի խոստովանություն՝ «Հին աստվածներին» առնչվող, որը դժվար է կարդալ առանց
խորապես զգացվելու:

Սրտիդ խորքից համաձայնում են գրողին, որ իրոք, «զարմանալի խաղեր ունի բաղդը»,
և իր կյանքում բախտի այդ ճակատագրական խաղը կապում է «Հին աստվածներ» դրա-
մայի հետ:

Համաշխարհային պատերազմի մասին Ծանթը խոսում է տարբեր շարժառիթներով:
Ամենից առաջ, սակայն, նա պատերազմական իրադարձությունները գնահատում է արև-
մըտահայության ճակատագրի տեսանկյունից: Այդ կապակցությամբ նրա խոհերն ու մտո-
րումները երևան են բերում գրողի անհանգիստ ու տագնապալի աշխարհը:

Դեռ նոր սկսած աշխարհամարտին Թուրքիայի հնարավոր մասնակցության կապակ-
ցությամբ, աչքի առաջ ունենալով արևմտահայության ճնշվածությունն ու անպաշտպանու-
թյունը, գրում է. «Իսկ ապագան իմ կարծիքովս ավելի վատթար է ըլլալու»: Իսկ արդեն
պատերազմող Թուրքիային սանձելու հարցում կարևորելով Կ. Պոլսի գրավումը և Դար-
դանելի բացումը՝ դրա հետ է կապում նաև «թուրքահայերու համեմատական կյանքի ապա-
հովումը»՝ այդ ուղղությամբ եղած սպառնալիքը «ամեննեմ մեծ վտանգը» համարելով հա-
յության համար: Այս տագնապն արտահայտվել է 1915-ի մարտի 11-ին՝ մեծ եղեռնի թուն
իրագործումից քիչ առաջ:

Ավելի քան 75-ամյա վաղեմության վերքերի ցավը մեր մեջ նորոգվում են, երբ կար-
դում ենք Վանի ու Կարիսի գրավման կապակցությամբ գրողի մտորումները: «Կը շնոր-
հավորեմ Վանի գրավումը, — գրում է նա, — գուցե և Բիթլիսի մինչև այս տողերս քեզի
հասնին. նույն բաղդը շուտով Մուշին ու Սասունին»:

Գրողը Վանում գործելու ծրագիր է հյուսում, աշխատում է Կովկասի վրայով անմիջա-
պես Վան մեկնել: «Իմ առաջին դիտավորությունն շիտակ Վան երթալն էր, — գրում է Ռու-
սաստան մտնելու թույլտվության քաջաշունչի մեջ խճճված Ծանթը, — քայց վերջին գաղթն
ու ավերը ամեն ինչ տակն ու վրա ըրավ»: Ահա ինչու այնքան զգույշ ու տագնապալի է
նրա ուրախությունը Կարիսի գրավման առթիվ. «Կը շնորհավորեմ էրզրումի գրավումը,
որու կարևորությունը մեզի համար անչափ է. միայն նախորդ դեպքերը տարօրինակ վախ
մըն են դրած մեջերնիս, որ կը խանգարե սրտանց ուրախանալուս»:

Գրողի խոհերը ազգային ողբերգությունից անցնում են համաշխարհային աղետի կոր-
ծանարար հետևանքներին առհասարակ. «Այս դաժան միջնադարյան պատերազմը շատ
երկար է տևելու՝ քայքայելով պետություններ, տնտեսություններ, ստեղծագործություն»: Բնական
ճանապարհով գրողի խոհը անցնում է մարդուն ու նրա գործին, խոհ, որը այն-
քան հոգեհարազատ է նաև իր Հանեսին՝ Հովհ. Թումանյանին:

Հրատարակվող նամակներում անմիջական փաստեր կան, որոնք ճշտում, ճշգրտում են
Ծանթի ստեղծագործական կյանքի այս կամ այն դրվագը, դրանով ամբողջացնում նրա
ստեղծագործական կյանքի պատկերը:

Այսպես, օրինակ, «Կայսր» դրամայի գրության ժամանակը ընդունված է 1914-ի մար-
տը, ինչպես և գրված է առաջին հրատարակության վերջում: Պարզվում է սակայն, որ
դա ճիշտ է միայն գրության սկզբի իմաստով:

Այսպես, կնոջ եղբորը՝ Աբրահամին գրած 10/23 հոկտեմբերի 1914 թ. նամակում⁴ նա
խոսում է ոչ թե դրաման մշակելու, այլ բուն իմաստով գրելու մասին: «Նոր Հոռոս» հա-
ներ են գգրոցեա, — գրում է Ծանթը, — կը դարձնեն աստիճան-անդին ու ակամա կը մտածեն.
«Հինա ամբողջ Եվրոպան նոր Հոռոս խաղալու վրա է, հիմա ի՞նչ ժամանակ է Նոր Հոռոս
գրեալու»: Բայց և այնպես կը գրեն ու պիտի գրեն: Պիտի գրեն մոռնալու համար չորս
կողմիս իրականը, պիտի գրեն վրայես նետելու համար այդ նյութը, որ երթամ նոր աշ-
խատանքի: Եուրջս կատարվող դեպքերուն ու իմ դրամայիս հերթին ոգուն մեջ զուգա-
հեռականություն մը կա, որը վար ձգեց իմ աչքիս դրամայիս գրավչությունը. գրակա-
նությունը կը սիրե հոսանքին դեմ, հոսանքին հետ իսկույն կը կորսնցնե իր հպարտու-
թյունը»:

³ «Լուսաբերը» ժամանակին մայրենի լեզվի ամենատարածված դասագիրքն է եղել 1—
6-րդ դասարանների համար: Հեղինակել են՝ Ստ. Լիսիցյան, Հովհ. Թումանյան, Լ. Ծանթ:
Գործել է 1907—1920 թթ., ունեցել է արևմտահայերեն տարբերակ:

⁴ Այդ նամակի հետաքրքրությունն ներկայացնող մասը բերում ենք ամբողջությամբ:

Գրողի ստեղծագործությունը, նրա գեղագիտությունը լուսաբանող անչափ թանկ այս խորհրդածությունը մեկնաբանելու պատիվը թողնելով Ռետազոտողներին, Ակատեմք, որ նույն օրը Լիսիցյանին ուղղած նամակում Ծանթը դարձյալ անդրադառնում է դրամային. «... աշխատությունն շատ կաղնիկաղ կը քալե. թեև չկան, սիրտ չկա. մարդ չգիտե՞ ի՞նչ ընե, ինչո՞ւ ընե»: Իսկ մեկ օր անց, դարձյալ Ակատի ունենալով «Կայսրը», Լիսիցյանին խոստովանում է. «... դեռ աշխատության ձեռք տված չունիմ, դեռ ինքզինքս չեմ գտած, ուրեմն և դեռ չեմ գտած հոգեկան հավասարակշռություն»:

Ավելի քան մեկ տարի անց՝ 1-ը նոյեմբերի 1915 թ., նա էլի խոսում է «Կայսրը» ավարտելու մասին և դարձյալ խորհրդածում. «... հիմա ի՞նչ ժամանակ է գրական երկ հրատարակ հանելու, ո՞վ գլուխ ունի. իրավ է, որ մոմենտի Ռետ ունի քանի մը առնչություն, բայց չէ՞ որ էականը զուտ գրական աշխատություն է»:

Ծանթի նամակներում հանդիպում ենք Թումանյանին վերաբերող ակնարկների, որոնք անչափ թանկ են մեր ազգային մեծագույն քանաստեղծի անձը և գործը բնութագրելու ուղղությամբ: Ահա Լոռուց ծառանգած հազվագյուտ կապիտալը «քոռ ու փուչ» անող ընկերոջ ստեղծագործական կյանքի յուրօրինակ ողբերգության համար սարած ցավի մի ինքնաբուխ արտահայտություն: Իմանալով, որ նա ամբողջովին տարվել է գրողների ընկերության գործերով, գրում է. «Գրողը տանի այդ գրողներն ալ, իրենց ընկերությունն ալ. ափսո՛ւ Հանես»⁵:

Հրատարակվող նամակներից առաջինը և վերջինը գրվել են Եվրոպա մեկնելու նախապահին. Ծանթի համար բնորոշ մի քան, որ այնքան պատկերավոր ու ոչ առանց հումորի արտահայտել է իր մտերիմը՝ Հովհ. Թումանյանը. «Էլի էն Ծանթը— ինքը էտեղ, միտքը Եվրոպա: Դաս է տալիս տրտնջալով— նրա համար, որ Եվրոպա գնա, դասագիրք է շինում— որ Եվրոպա գնա, պիես է գրում, որ Եվրոպա գնա, գարնանն սպասում է, որ Եվրոպա գնա, վերջապես, կնոջն ու երեխաներին արդեն ուղարկել է, որ ինքն էլ ստիպված Եվրոպա գնա»⁶:

1917-ին Եվրոպա մեկնող Ծանթը Մոսկվայում ակնատես է լինում Ռոկոտեմբերյան կոիվներից, իսկ Պետերբուրգից Ակարագրում է «մեծամասնական հեղափոխության» հետեւվանքով առաջացած իրականությունը, որ այնքան ծանոթ է մեզ... այսօրվա իրականությունից:

Ստ. Լիսիցյանը խոշոր մտավորական է՝ պատմաբան, աշխարհագրագետ, ազգագրագետ, մանկավարժ, հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ... Սակայն նա երախտագիտության է արժանի նաև բոլոր այդ ծառայություններից դուրս:

Պետք է արժանին հատուցել այն մարդուն, որը դժվար մի ժամանակում արիություն է ունեցել խնամքով պահելու «ժողովրդի ոխերիմ թշնամիներից» մեկի նամակները:

Խ. Գ. ՎԱՐՁԱՆՅԱՆ

1

[1914, օգոստոսի 9, Նախիջևան]?

Սիրելի Ստեփան, ահա երկու շաբաթ է նստած եմ Նախիջևան՝ և չգիտեմ ծայրը ուր պիտի երթա: Դեռ գնացքի մեջ էի, որ Գերմանիան պատերազմի հայտարարությունը ըրավ. ուզեցի Բալտիկ ծովով անցնիմ, արդեն գոց էր, ուզեցի Սև ծովով Օդեսա ու հոնկե Պոլսի վրայով Իտալիա անցնիմ, եվրոպական ընկերությունները ընդհատեցին հրթեկերը, և Դարդանելը փակվեցավ: Հիմա կ'ըսպասեմ ֆրանսական զենքի հաղթանակին, որ Շվետի վրայով, Անգլիայով անցնիմ Փարիզ ու Լոզան: Տունեն իհարկե ոչ մեկ լուր չունիմ և ունենալու ալ հույս չունիմ, թեև հոս մնալս հասկանալուս պես հասցե տվի ու քանի-քանի անգամ գրած եմ արդեն: Հիմար հոգեկան դրություն է, պարապ ժամանակ և աշխատելու, կենտրոնանալու անկարելիություն. կը կարդամ ժա-

⁵ Այս ցավից են բխել իրեն՝ Թումանյանին ուղղված նրա սրտագին հորդորները. «Գրե՛, գրե՛, և այն ժամանակ դուն կբարձրանաս քու աչքիդ ու այնքան քեզի վերը կզգաս...» («Թումանյան. ուսումնասիրություններ և հրատարակումներ», Ե., 1935, էջ 356):

⁶ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1945, էջ 310:

⁷ Ուղղանկյուն փակագծերի մեջ առնված տարեթվերը ճշտվել են փոստային կնիքով:

մանակս սպաննելու համար և արդեն ձեռքս առի անգլիերենը: Հոս կ'ապրիմ ուսուցիչ Հակոբ Խաչատրյանի² մոտ, որու հետ ձմեռը եղած ես էջմիածին, և որը հիմա քեզ կը բարևե: — Չնայելով պատերազմին ու խառնակ ժամանակին հոս հասնելուս Բոստոնի թատրոնը պատրաստության վրա գտա. սեպտեմբերի սկիզբները կ'ըսկսի սեզոնը. դնելու են «Հին Աստվածներս» Չուբարի³ թարգմանությունը. բեթիստրն է Մարջանով⁴ Մոսկվայի «Ազատ թատրոնի» նախորդ տարիներու վարիչը. իսկ գործատեբը ինչ-որ Կրուչին⁵. հիմա դեկորատիվները նկարելու վրա են⁶. և եթե պատերազմը այսպես շարունակվի, կամա-ակամա ներկա պիտի ըլլամ առաջին ներկայացմանը⁷. ահագին ծախքեր կ'ընեն, և Մարջանովը մեծ հափշտակությունը կ'սկսե է գործին, հետաքրքիր է՝ ինչ պիտի դուրս գա: — Խնչ վիճակի է Քափանակյանի⁸ թարգմանությունը. կը խնդրեմ՝ որ անոր քովը եղած երկու օրինակ թարգմանությունները⁹ առնես ու ինքդ քու քովդ պահես մինչև իմ կարդադրությունս: — Կենթադրեի ու արդեն տեղեկացա, որ տիկին Կատարինեն¹⁰ ու աղջիկներդ վերադարձած են քեզի, թեև անշուշտ ճամփան նեղված պիտի ըլլան՝ դատելով իմ ճամփորդութենես: Իսկ դո՛ւն ինչ կ'ես, կը հուսամ վերջացուցած ես արդեն «Լուսաբերի» աշխատանքներդ. շատ ուրախ կ'ըլլամ՝ եթե արդեն տպված թերթերը դրկես ինձի հոս, տեսնեմ՝ ինչ դուրս եկավ: Օհանեսին¹¹ գացի՞ր: Լեվոնեն¹² լուր ունի՞ս. անհանգիստ չըլլաս. հոս շատ-շատերն են քու վիճակիդ. Լևոնը խելոք տղա է, և հարկ եղած ժամանակ Մխիթարյանները կ'օգնին նրան, ինչպես և իր ինստիտուտը, թե փողով և թե այլ ամեն կերպով. հավանորեն հիմա Ջվիցբերի է, և շատ ուրախ պիտի ըլլամ՝ եթե խելք ըրած ու Ջավոյի¹³ մոտ գացած ըլլա: Սրտագին ու ջերմ բարևներս մայրիկին, Կատարինենին, Սուրբիկին¹⁴, որուն տեսքին կարոտ մնացի, նազիկին¹⁵ ու քեզի. շատ-շատ համբույրներով՝ Լևոն

Հացես. Нахичеван н/д Вторая.

Софовская, 12 Якову Хачатрянцу—

Շանթին

2

1914, օգոստոս 27,

Նախիջևն

Ստեփան, նախորդ նամակս, որ գրած եմ 3—4 օր առաջ, անշուշտ ստացած ես. կը պատրաստվի հյուսիս մեկնելու, երբ տեղեկացա, թե Օդեսա ֆրանսական նավ կա. իսկույն հեռագրով դիմեցի Մյուսուժրիի¹⁶ գրասենյակը, պատասխան եկավ, որ նավը մեկնելու է սեպտեմբերի 2-ին, և որ տոմսակ պահված է ինձի համար. ժամե մը ճամփա կ'իյնամ Օդեսա. հոնկե քեզի կը գրեմ նորեն: Ասիկա գործի հաջող կողմը, թեև միշտ սիրտս վախ է, որ վերջի վայրկյանին Թուրքիան կոռվ կը հայտարարե¹⁷, ու նեղուցները կը գոցեն, կամ որևէ ուրիշ արգելք դուրս կու գա: Գամ գործի ձախորդ կողմին. Աբրահամեն¹⁸ նամակ առի Բագուեն. դուրս եկավ, որ Լոզան մեր բանկը գոցեր է իր վարկը Ջավոյի առջև¹⁹ պատերազմը հայտարարելուն պես. Ջավոն հազիվ կրցեր է կերպ մը հիսուն ֆրանկ ստանալ. և ասիկա դեռ 1—1/2 ամիս առաջ. չգիտեմ՝ ինչ մտածեմ, ինչեր րես մտքես կ'անցնին. ո՞վ գիտե՞ ինչ դրություն մեջ են հիմա. այս պայմաններուն մեջ պարապ գրպաններով տեղ հասնիլ չեմ կարող, իսկ շոգենավս չփախցնելու համար ալ ժամանակ չունիմ, որ քեզի գրեմ ու դրամ ստանամ, ստիպվեցա հոս ուրիշի օգնություն ու

միջնորդությանը դիմելու. Ալեքսանդր Հարությունովիչ Աբելյանեն²⁰ վերցրի երկու հարյուր ռուբլի, խոստանալով, որ մինչև երկու շաբաթ թիֆլիզեն քեզմե կ'ըստանա այդ գումարը: Արդ՝ Ստեփան, կը խնդրեմ, որ այս նամակս ստանալուն պես՝ երկու հարյուր ռուբլի պոստին հանձնես Նախիչևան Ալեքսանդր Հարությունովիչ Աբելյանի հասցեին (երևի կը ճանչաս դերասանի եղբայրը): Եվ շատ կ'խնդրեմ, որ այդ երկու հարյուր ռուբլին չհանես ձեռքդ եղած երեք հարյուրեն. չէ՞ որ անցած տարվան հաշվեն ես դեռ 200 ռուբլի ունիմ ստանալիք արևելյան գանձարանեն²¹, ատոր դեմը հաշվեմ. իսկ այն երեք հարյուր ռուբլին, ինչպես խնդրած եմ նախորդ նամակիս մեջն ալ, անմիջապես ջանա փոխադրես Լոզան Զավոյի հասցեին. ձեռքդ եկած բոլոր միջոցներուն դիմե, որ հաջողցնես. իմ ճամփորդությունս ամենեն լավ պայմաններու մեջ դեռ երեք շաբաթ է տևելու. դեռ հարց է՝ պիտի հաջողիմ ողջառողջ տեղ հասնելու. կյանք է, ով գիտե. և վերջապես եթե հասնիմ ալ, երկու հարյուր ռուբլիով ինչ կ'ըլլա, ան ալ հիմակվան կոտորված կուրսովը: Ստեփան, կը խնդրեմ շուտ շարժվե, դիմե ամեն միջոցի, միայն փող հասնի Զավոյի ձեռքը. Աբրահամն ալ Բագու փորձեր կ'ընե, գոնե հարյուր ռուբլի մը իսկույն փոխադրել կարողանալու: Դե, սիրելիս, կը վերջացնեմ և իսկույն պիտի ճամբա իյնամ. ինքս ալ շփտեմ ուրախանամ, թե ոչ. դեռ շեմ հավատար, որ նավը հաջողի պիտի:

Համբույրներով՝ Լևոնդ

3

1914, օգոստոս 31, Օդեսա

Սիրելի Ստեփան, պատասխան-հեռագիրդ ստացա՝ շնորհակալ եմ: Շոգենավը՝ որով ես կ'ուզեմ մեկնիմ՝ արդեն հասած է, Միսաժրբի ընկերության «Ներա» շոգենավը. իհարկե դեերը կրկնակի բարձրացուցած, բայց արդի պայմաններուն մեջ շատ բարակը փնտրելու չի գար: Վաղը առտու կը վերցնեմ տոմսակս, կը տեսնեմ վերջին պատրաստություններս ու մնաս-բարով կ'ըսեմ ուսական հողին. կարծեմ վաղը՝ երկուշաբթի՝ իրիկուն շոգենավը կը մեկնի: Եթե թուրքական միևնաներուն ու պատերազմի սպառնալիքներուն մեջն ողջ-առողջ Գարգանելեն դուրս ելնի՞նք՝ կրնամ արդեն խոր շունչ մը քաշել և հուսալ, որ տաս-տասներկու օրեն վերջապես կ'ըլլամ մեր տանը այս շառ տարօրինակ ու շատ ալ ծանր ողիսականես ետքը:

Առայժմ մեծիդ ու փոքրիդ սրտագին բարևներս. տեղ հասնելուս պես քեզի կը գրեմ, թեև գիտեմ՝ իդուր, հագիվ թե ձեռքդ հասնի:

Օդեսան հրաշալի քաղաք է. շատ հավնեցա, թեև դժբախտաբար վայելել չկրցա, դեռ երևի հիվանդութենես բոլորովին կազդուրված չէի, նորեն թեթև տկար կ'ըզգամ ինձի և վախնալով, որ կը լրջանա՝ հյուրանոցես շատ քիչ դուրս կու գամ, մանավանդ որ անպիտան ալ քամի է: Լայն ու մաքուր, ճաշակով, սրտաբաց քաղաք է. կը հիշեցնի Մարսելը, բայց ավելի գեղեցիկ: Գրեթե անընդհատ լրագիր կը կարդամ. այդ բոլոր наступление-ներն ու отступление-ները գլխուս մեջը կատարյալ շախմատ է դարձեր. քիչ է մնացեր՝ որ գորավար դառնամ, բանի մը պետք եկած կ'ըլլամ գոնե իմ պետությանս համար, որուն մինչև օրս ոչ մեկ խեր չեմ տված: Է՞, Ստեփան ջան, դեռ շատ դժբաղտ գատ է մարդ ըսվածը, դեռ շատ է անասուն. և դեռ շատ պետք է արյուն թափե ու արցունք, որ վերջապես մարդ դառնա: Երբ քիչ մը վերեն կը նայիմ՝ հոգիս խորապես կը տխրի: Դե՞, սիրելիս, առայժմ մնաս-բարով, հաջողություն քեզի, հաջողություն և ինձի, Լևոն

Սիրելի՛ Ստեփան, երկու շաբաթ առաջ քեզի գրած եմ նամակ մը, բայց գիտեմ՝ կա՛մ չես ստացած կա՛մ շատ ուշ ես ստանալու. Լոզանեն Քիֆլիս գացող կա, կ'օգտվիմ առիթեն քեզի գրելու: Եվ գրելիքս ալ շատ ախորժելի բաներ չեն անշուշտ. այս դաժան միջնադարյան պատերազմը շատ երկար է տևելու՝ քայքայելով կյանքեր ու պետություններ, տնտեսություն ու ստեղծագործություն: Ես խոսիմ քեզի իմ տնտեսութենեն. «Արծիվը»²² մայիսեն իվեր, այսինքն իմ Լոզանեն հեռանալես իվեր, ոչինչ ղրկած չէ. Պոլիս եկան շոգենավ, ու կրցանք քանի մը խոսք փոխանակել. հիմա զուր է հոնկե որևէ հույս, իսկ ապագան իմ վարժիքովս ավելի վատթար է ըլլալու, քան հիմա: Հոս բանկան, ուր Զավոյի 2000 բուրլու բանտերը²³ գրավ էի գրած ու դեմը պարտք կ'ըստանայի, պատերազմի առաջին օրեն դադարեցուցած է ամեն վճարում բացարձակապես: Զավոն մինչև իմ գալս նեղվելով ու պարտքով քաշ էր տրվեր կերպ մը. ես հետս բերած ու կովկասեն ստացած քանի մը հարյուր Ֆրանկներով տվի պարտքերը, ու հիմա կապրինք ու դեռ ամիս մը կրնանք ապրիլ: Հուլիս այն 300 բուրլին էր, որ դուն փոխադրեր ես Աբրահամին, ան ալ, ինչպես հեռագրած է, ամիսեն ավելի է, ղրկած է արդեն, բայց չենք ստացած և կը վախնամ որ չըստանանք. մեջը անճշտություն մը, բան մը ըլլալու է, անշուշտ. գրեր եմ արդեն Աբրահամին, հիմա այս նամակիս կից կը գտնես իրեն նամակը մը, որ իսկույն ղրկե իր հասցեին, և ուր խնդրած եմ, որ ան ստուգե այդ գումարին ինչ եղած ըլլալը: Հիմա քեզմե ալ կը խնդրեմ, որ այս նամակս ստանալուդ պես ինձի դրամ հասցնես իմ առաջիկա տարվան ստանալիքիս հաշվին, ինչքան որ կարող ես. դրամ հոս կ'ըստացվին Պետրոկրատի վրայով ռուսական լիկասիոնի միջոցով, լսած եմ որ «Credit Zyouair»-ն ալ կը փոխադրե կարծեմ: Հոս գոնե մեկ-երկու ամսվան հենարան ունենամ ձեռքս. կը վախնամ, որ հանկարծ արդի եղած թույլ կապը Ռուսաստանի ու Զվիցերիայի մեջ կրնա դյուրավ կտրվի, և կը մնամ բոլորովին բացը: Ա՛, անցներ անգամ մը այս ծանր ձմեռը, ու տեսինք՝ ինչ ենք դառնալու: — Գրե ինձի, թեև ուշ, բայց կու գան նամակներն ու լրագիրները, այնպես որ ղրկե՛ և «Հասկերու»²⁴ մեր շունացած թիվերը, ինչպես և նոր տպված «Լուսարբերը» և «Ուղեցույցը»²⁵: Ի՞նչ կ'ընեք դուք. դպրոցդ կարգի՞ն է. Հանեսը հիմա ալ զբաղված է իր հողերովը²⁶. ինչպես կը տեսնեմ, գեշ չէր ըլլար, եթե ես ալ կամաց-կամաց հող ձեռք բերելու մասին մտածեի. հիմա ամբողջ աշխարհքը հողի կռիվ է. և իրավունքը՝ Հանեսինը: Իսկ ի՞նչ եղավ «Հիվանդանոցի» քու նշանավոր ծրագիրդ. պատերազմը հո՞ղ ալ հասավ. ափսո՛ս: Եղեք առողջ, մնացածը դատարկ բաներ են այս բարբարոս և հիմար դարուս մեջ: Փառք Աստու, առողջ ենք մենք ալ. բայց աշխատությունս շատ կաղնիկաղ կը քալեմ²⁷. Թեև չկան, սիրտ չը կա. մարդ չգիտե՛ ի՞նչ ընե, ինչո՞ւ ընե: Հասցես փոխված է. փոխանակ Montagibert 6-ի, ասկի ետքը՝ Av. Druey 24a: Զերմ բարևներս տիկին Կատարինեին, զավակներուդ ու քեզի: Համբույրով՝ Լևոն

Սիրելի Ստեփան, երկու շաբաթվա շափ է՝ հասած եմ տուն. ճամբորդությունս անցավ շատ հանգիստ ու հաճմար. կարծես հատուկ մեզի համար բա-

ցին Դարդանեւն ու նորեն գոցեցին: Քանի եկած եմ՝ զբաղված եմ տան գործերով, փոխեցինք և բնակարանը, դեռ աշխատութեան ձեռք տված շունիմ²⁸, դեռ ինքզինքս չեմ գտած, ուրեմն և դեռ չեմ գտած հոգեկան հավասարակըշուսթյունս: — Դուն ի՞նչ ըրիր. շատ հետաքրքիր եմ՝ ավարտեցի՞ր «Ուղեցույցը», արդեն տպված է. ի՞նչ կերպարանք ստացավ Ս. տարին. օրինակ մը հանձնե պոստին, գուցե հասնի. Ռուսաստանեն նամակ դեռ չենք ստացած, բայց «Հորիզոնները» գրեթե կանոնավոր կ'ըստանանք: Վստահ չեմ, որ այս նամակս ստանալու ես, և ատոր համար ալ կարճ կը կապեմ. ստանալուդ պես իսկույն պատասխանե: Աբրահամը 300 ռուբլին հեռագրեր է, որ զրկած է, բայց մինչև հիմա դեռ չենք ստացած: Ատոր փոխարեն Պետրոկրատի ու Ժընեկի միջոցով ստացած ենք 200 ֆրանկ. այլև ռուսական լիկասինոնի միջոցով 304 ֆրանկ 50 սանտիմ. այդ երկու գումարներն ալ չըզիտեմ ով է զըրկողը, կ'ենթադրեմ, որ դուն ես, թեև շատ տարօրինակ գումարներ են, և ոչ մեկ կերպով հաշվի բերել չեմ կրնար: Իսկ Աբելյանի 300 ռուբլին տարակույս շունիմ, որ արդեն ճամբած ես իր ժամանակին: — Դե՛, սիրելի՛ս, առայժմ բարև ու համբույր: Եթե այս նամակիս պատասխան գա՛ կը գրեմ արդեն մանրամասն: Լևոն

Նոր հասցես՝ Avenue Druey
24a, Lausanne

6

1914, դեկտ. 16, Լոզան

Սիրելի՛ Ստեփան, այս վայրկյանիս տեղեկացա, որ Աբելյանը Նախիչևան դեռ իր երկու հարյուր ռուբլին չէ ստացած քեզմե. այնպես ինձի անհարմար ու ճնշված կ'ըզգամ. հաստատ խոսք էի տված ու այնպես վստահ էի. չէ՞ որ դեռ երկու հարյուր ռուբլի ունիմ անցած տարվան լուսաբերներուն վրա, որ անմիջապես ետևես զրկեիր պիտի. կը հասկրնամ, որ վճարումները անշուշտ դժվարացած են և Կովկաս, բայց մի՞թե բոլորովին ընդհատեցավ: Ինչևէ. անշուշտ հեռագիրս առած ես արդեն, և հույս ունիմ, որ կարգադրած ալ ես. կը խնդրե՛մ, Ստեփա՛ն, ամոթ է. այնպես նեղ վայրկյանիս ու այնպե՛ս վրստահորեն օգնեք է մարդը ինձի: — Սիծաղելին ան է, որ հիմա ինձի համար ալ դրամ եմ խնդրելու. սա ինչպե՛ս պիտի ընենք: Հին ներկայացումեն, նոր ներկայացումեն, երկու գրավաճառներեն, իմ մասնավոր հաշվիս դեմ, եթե «տիպլոմատիկ» դիմում մը ընեիր, կարելի է հարյուր հիսուն ռուբլի մը գոնե կարողանայիր իրարու վրա բերել: է՛, ամեն տեսակետեն շատ անհարմար բան դուրս եկավ արդի պայմաններուն մեջ իմ հոս գտնվելս: Հող հիմա այնպե՛ս իրարանցում է, այնպե՛ս ոգևորութուն²⁹. շատ կ'ուզեի մոտեն ապրիմ այդ բոլորը. ու շա՛տ կը ցավիմ, որ այսպես հեռո՛ւ կապված մնացինք այս ձմեռը: Աբրահամը կը գրե, որ անմիջապես ելնենք ու գանք Կովկաս: Տղա է: Դեռ թողնենք մի կողմ երեք փոքր երեխաներով, ձմեռով, հինգ-վեց պետութեան սահմաններով ու այս տակնուվրա խառնակութեան միջով շաբաթներով ճամբորդելու հեռանկարը. բայց ո՛ւրտեղեն պիտի գտնեմ այդ ճամբորդութեան համար անհրաժեշտ եղող ահագին դրամը, ան ալ արդի կրկնապատկված տարիճներով. և հող ալ ինչո՞վ և ինչպե՛ս ապրինք ամբողջ ընտանիք մը, այսպես տարվան կեսին: Նորեն ամենեն խելացին տեղս ծանր նստելն է. կաշխատինք կերպ մը ծայրը ծայրին բերելու, մինչև բացվին տաք օրերը և, ով գիտե, տաք օրերու հետ ալ գուցե տաք պայմաններ, թեև այս բոլորը բնա՛վ երևույթը շունին շուտով վերջանալու: Իսկ դո՛ւք ինչ բանի եք. եղբայր, մեջե-

մեջ մեկ-երկու տող գրե գոնե, կարոտ ենք մնացեր նամակի, որ մոտիկ մար-
դու խոսք լսենք: Հիմա Կովկասի հետ մեր միակ կապը «Հորիզոնն»⁸⁰ է, շե
կրնար երևակայեր, թե ինչ անհամբերությամբ կ'ըսպասենք գալուն: Հա՛, լավ
միտս ինկավ, նորեն փողի պատմություն քեզի. կը խնդրեմ, որ «Հորիզոնին»
վճարես կես տարվան բաժնեգիրը, որ շրջա թե հանկարծ դադրեցնեն առաքու-
մը, կը մնաք բոլորովին անյուր: Բոլորիդ ջերմ ու սրտագին բարևներ ինծմե
ու Զավոյեն. կարոտով կը համբուրեմ քեզի. Լևոն

Նոր հասցես գիտես՝ Av. Druey 24a.

7

1915, մարտ 11, Լոզան

Սիրելի Ստեփանս, այս վայրկյանիս ստացանք «Հասկերու» թիվը. մե-
ծով-պատիկով շե կրնար երևակայեր՝ ինչպես ուրախացեր ենք. վերջապես
գոնե գիրդ տեսա. քանի հեռացեր եմ Կովկասեն, ասիկա առաջին կյանքի
նշանն է քեզմե. իհարկե եթե չհաշվինք երկու-երեք դրամատան միջոցով ձեռքս
հասած յոթը հարյուր ֆրանկը. Արեւիանն էլ դրած էր, որ ստացեր է քեզմե
իր երկու հարյուրը. շատ ու շատ շնորհակալ եմ: Հիմա օր-օրի կ'ըսպասենք
Գարգանելի բացումին, որը հայերուս տեսակետեն ամենեն կարևոր կետն է
այս ամբողջ պատերազմի ընթացքին. ասիկա ըսել է Թուրքիայի սանձումը,
ուրեմն Կովկասի հանգստացումը, այլ և հավանորեն թուրքահայերու համե-
մատական կյանքի ապահովումը, որու դիմ եղած սպառնալիքը ամենեն մեծ
վտանգն է այս վայրկյանիս մեզի դեմ: Բացի ասկե Պոլսի գրավումը կաս-
կած չկա, որ վերջի սկիզբն է անշուշտ այս համաշխարհային աղետին. վեր-
ջանա՛ր, ալ ջիղ չմնաց: Միակ հետաքրքրությունս, ինչ ըսել կուզի, լրագիր-
ներն են. իսկ միակ մոռացումս պատմության ընթերցումը. հիմա մոտեն կը
ծանոթանամ խաչակիրներու և արաբներու պատմությանը: Իսկ Կովկասեն
կտրված ենք բոլորովին. առաջ գոնե «Հորիզոնները» կ'ըստանայինք, որը նոր
տարիեն սկսած դադրեցուցին. թեև դրած եմ իրենց, որ դիմեն քեզի և ստա-
նան իրենց բաժնեգիրը. թեև գրած եմ և քեզի երկու անգամ նույն խնդիրքով.
միթե նամակներս ոչ մեկը չէ ստացված. հոսկե դրամ փոխադրելու հարմա-
րություն չկա այդպես փոքր գումարի համար: Կը խնդրեմ ինքդ անձամբ
կարգադրե, որ ղրկեն թերթերը, օրինակ, սկսած մարտի կեսեն: Իսկ քեզի ալ
չեմ ըսեր, որ պատասխանես ինծի, երևի կը շրջես օր մը, երբ պատերազմը
վերջանա և կամ, ո՛վ գիտե, երբ աշխարհքը վերջանա:

Զավոն, ես, պզտիկներս բոլորս սիրով ու կարոտով կը համբուրենք ու
կը բարևենք քեզի ու քուկիներուդ. առո՛ղջ ըլլանք, քա՛ջ ըլլանք. կու գա՛ն
ավելի ազատ օրեր. լավագույնի հույսն է նորեն միակ արևը, որ այս ցուրտ
ու դաժան օրերուն կը տաքցնե մեր սառած հոգին գոնե քիչիկ մը: Կը զրկեմ
քեզի՝ Լևոն Սեդրոսյան:

8

1915, հունիս 3, Լոզան

Սիրելի Ստեփանս, լուր չունիմ քեզմե, բայց հաղար ֆրանկը ստացա այս
վայրկյանիս. շնորհակալ եմ: Կ'ըսպասեմ Գարգանելի բացվելուն, որ ինչ ընե-
լիքս գիտնամ, մնացեր ենք առկախ օդի մեջ: Կը շնորհավորեմ վանի⁸¹ գրա-

վումը, գուցե և Բիթլիսի մինչև այս տողերս քեզի հասնին. նույն բաղդը շուտով Մուշին ու Սասունին. տեսնենք ի՞նչ է դուրս գալու այս սարսափելի արյունահեղութենէն: Միայն թե շո՛ւտ: Կը շնորհավորեմ նույնպես և քու կիմնագիտնդ⁸² ու բոլոր սրտովս հաջողութուն կը ցանկամ. ուրեմն ըրիր վերջապես այդ կտրական քայլը, որը վերջիվերջո պետք է ընելի. վստա՛հ եմ, որ դպրոցդ ըլլալու է առաջնակարգ հաստատութուն մը: Զերմ ու սրտագին բարեներս տիկին Կատարինեին, մայրիկին, Լևոնին, Սուրբիկին, բոլորի՛դ, բոլո՛ր սրտովս: Ի՞նչ կ'ընեք հիմա, ո՛ւր եք ըլլալու ամառը. կրնա՞մ հուսար, որ գոնե քու «տարեկան» նամակը ստանամ պիտի շուտով: Եթե պատերազմը շարունակվի մինչև աշուն, ինչ որ ավելի քան հավանական կ'երևա, ես երևի ստիպված պիտի ըլլամ գալու նորեն Կովկաս առանձին, ամբողջ ընտանիքով բոլորովին անկարելի բան է: Խելքդ կը կտրե՞, որ քիչ-շատ ձեռնտու հարմար պաշտոն մը կարող ըլլամ գտնել արդի խառնակ պայմաններուն մեջ: Համե՛նայն դեպս աչքի առաջ ունեցի՛ր: Ի՞նչ բանի է Հանեսը, իրմեն ալ ոչ մեկ լուր, եթե չհաշվենք «Հորիզոնի» պոեմը⁸³: Պինդ-պինդ կը համբուրեմ քեզի ու կըցանկամ բոլորիս առողջութուն, հաջողութուն ու լավագույն օրեր. Լևոնդ

9

1915, սեպտեմբեր 17, Լոզան

Սիրելի Ստեփանս, ստացած եմ երկու երկար նամակներդ ալ, հազար ֆրանկն ալ. բոլորի համար ընդունե՛ իմ ջերմ շնորհակալութունս: Կը հուսամ Լևոնդ կազդուրված է արդեն բոլորովին: Այս պատասխանս դիտմամբ կ'ուշացնեի, ավելի որոշ բան մը գրել կարող ըլլալու համար քեզի, բայց կը տեսնեմ, որ շատ երկարեցավ: Լոզանի ու Ժընևի թուրքահայ ուսանողներու խմբի մը հետ միասին դիմած ենք Զվիցցերիայի ռուս դեսպանին, խնդրելով, որ մեզի դյուրութուններ տրվին Կովկաս անցնելու, իբրև հայ կամավոր: Դեսպանը մեծ սիրով ու խոստումներով դեմ եկավ մեր խնդրանքին, հեռագիրներ փոխանակվեցան, մասամբ դրական պատասխան մը առած ենք արդեն, բայց վերջնական որոշումը դեռ կը քաշքշվի այս երկու ամսե իվեր: Կը հուսամ, որ մինչև 8—10 օր ստացվի պատասխանը, և անմիջապես ճամբա իյնանք: Ես իհարկե հրացանը ուսս գարնելու դիտավորութուն չունիմ⁸⁴, բայց վստահ եմ, որ հոտ բանի մը պետք գալ կրնամ: Իմ առաջին դիտավորութունս շիտակ Վան երթալն էր, բայց վերջին գաղթն ու ավերը ամեն ինչ տակն ու վրա դրավ: Կու գամ՝ կը տեսնեմ: Եթե մեր իմբական խնդիրը մերժվի, ես և ետք է ջանամ անհատապես գոնե անցաթուղթ մը ստանալու ռուսական դեսպանատունեն. եթե հարկ եղավ, կը հեռագրեմ նաև քեզի, որ հոտ աշխատեք արագացնելու ու հաջողցնելու: Բայց շատ ուրախ պիտի ըլլամ անշուշտ, եթի այդ երկար-բարակ պատմության պետք չմնա: Եթե հաջողիմ՝ հոսկե մեկնելու օրերս՝ քեզի նորեն կը գրեմ բացիկ մը: Առայժմ ջերմ ու սրտագին բարեներս ձեզի բոլորիդ՝ թե՛ իմ կողմես, թե՛ Զավոյի և թե՛ պզտիկներու: Հիմա ընտանիքով գալ բացարձակապես անկարելի է. ուրիշ ամեն հարց մեկ կողմ թողած՝ միայն ճամբու ծախքը արժե զուտ հարյուր րուբլի: Անսնք կու դան գալ գարնան, եթե կովի պայմանները հնարավորութուն տվին: Զերմ կը համբուրեմ քեզի՝ Լևոն

Նոր: L. Seghossian, Av. Druey 24a
Lausanne

1915, հոկտ. 6, Լոլան

Միրելի Ստեփանս, դեռ մինչև հիմա պատասխան չեկա՞վ ուսական դեպարտմենտին. ալ ձանձրացանք սպասելին, այս վարանոտ սպասողական վիճակը հոգիս հանեց. ամեն օր, ամեն օր հույս ունինք, որ վերջնապես կ'ըստանանք հեռագիրը ու ճամբա կ'իյնենք. բայց ահա՛ օրերը կ'անցնին իրարու ետև, ցուրտերը ըսկան արդեն հոս, այս տարի խիստ վաղաժամ ու դեռ նստած ենք ու տեղերնուս երերալ շնք կրնար: Թուրքերը մեզի ալ անցագիր չեն տար, և ալ ինչերնու՞ն է պետք իրենց անցագիրը, գլխուն դպշի. ուսական թույլատրութունն ալ ահա այսպես կը քաշքշվի ամիսներով: Ներքին գործոց նախարարութունը հեռագրած է արդեն դեսպանին, որ Թուրքիայի հայերուն սկզբունքով արգելք չկա Ռուսաստան մտնելու. այդ հեռագրի վրա էր, որ դեսպանը բոլոր խնդրատուններու անունները հեռագրած է Պետրոգրադ ու խնդրած մեզի համար անցագիր: Ալ հույսս կորսընցնել սկսա: Առաջ կը մտածեի, որ ուսանողական խմբին հետ միասին և իրեկ կամավորներու ավելի գլուխին ու ավելի արագ կ'ըստանամ Ռուսաստանի մուտքը: Հիմա կը մտածեմ անհատապես դիմում ընեմ: Նորեն դեսպանը պիտի դիմե Ներքին գործոց նախարարության. և եթե հոտկե Թիֆլիզին առաջնորդի, կամ քաղաքագլխի. կամ ուրիշ կարևոր անձի մը կողմե մասնավոր դիմում ըլլա, կամ ավելի ևս եթե Պետրոկրատի մեջ ջանացող մը ըլլա՝ գուցե համեմատաբար ավելի շուտ ստացվի ինձի անցագիր տալու թույլտվութունը: Կամ գուցե հոս նորեն անհատկապես դեսպանին դիմելս ավելորդ է և ավելի հարմար է ուղղակի հոտկե ըլլա դիմումը. չգիտեմ ինչպես վարվիմ: Մինչև ամիս մը այս նամակս անպատճառ հասած կ'ըլլա արդեն ձեռքդ, եթե չկորսվի: Եթե մինչև այդ ժամանակ մեր խմբական դիմումին պատասխան չեկա՞վ, և եթե քեզմե ալ որևէ հեռագիր չըստանամ, պիտի դիմեմ դեսպանին անձնապես, առանձին, և ինձի համար անցագիր խնդրեմ: Քեզի ալ իսկույն կը հեռագրեմ դիմած ըլլալս, որ հոտ ընես ձեռքդ եկածը, հնթադրելով, որ այս նամակս կրնա ձեռքդ չըլլալ: Իսկ եթե հանկարծ մեր խմբական դիմումին դրական պատասխանը գա՛րնականաբար իսկույն ճամբա կ'իյնանք, և քեզի ալ իսկույն նախօրոք իմաց կու տամ: Կը խնդրեմ, որ ինձի փոխադրես նորեն յոթը հարյուր ֆրանկի չափ, նույն ճամբով, ինչ ճամբով որ փոխադրած ես մինչև հիմա: Այդ դրամը ա՛հրածոջտ է ինձի, միևնույնն է հոս ըլլամ, թե արդեն ճամբա ելած: Այլ և թուլութուն մի ընեք ու քանի մը տողով պատասխանե նամակներուս. մոնոդու: Թաթարական դարերու այս վերադարձին ու ժողովրդական ընդհանուր մղձավանջի այս ծանր օրերուն՝ մարդ եռակի պահանջ ունի մոտիկ մարդու երկու խոսքին: Իսկ եթե ես մեկնած ըլլամ՝ ավելի ևս. չէ՞ որ Զավոն հոս մեռակ է ըլլալու: Կը հուսամ առողջ եք բոլորդ, և որ Լեոնը արդեն ապաքինված է վերջապես: Զերմ բարևներս քեզի ու քուկիներուդ, այլև Օհանեսին ու իրեններուն: Կը ցանկամ առողջութուն բոլորիդ ու շուտով տեսութուն: Համբույրներով՝ Լեոն

1915, հոկտ. 8, Լոլան

Ստեփան, քանի մը օր առաջ քեզի գրած նամակիս հակառակ՝ համբերել չկրցա: Երեկ վերջնականապես հույսս կտրեցի մեր խմբական դիմումեն, գնացի Բերն դեսպանին և խնդրեցի ինձի համար անցաթուղթ: Նախ պատասխանը

եղալ նույնը, ինչ որ ամռանը ես արդեն մեկ անգամ ստացեր էի ժընեկի դեպանեն՝ «Պետք է դիմել ներքին գործոց նախարարութեան»: Բայց իմ տված բացատրութիւններու վրա՝ խոստացաւ տա ինծի անցաթուղթ, եթէ Քիֆլիզի նահանգապետը տա իր համաձայնութիւնը: Եվ ինքը հեռագրեց նահանգապետին, հայտնելով, որ հոտ կը ճանչնան ինծի՝ Լեոն Սեղրոսյան Շանթին՝ Մեսրոպ Եպիսկոպոսն⁸⁵ ու Քաղաքագլուխ Խատիսյանը⁸⁶: Ես մեծ հույս ունիմ, որ մինչև 8—10 օր իմ անցագրի այս շարքաստիկ հարցը կը լուծվի, բայց ո՞վ գիտե՞ նահանգապետը կրնա և կարևորութիւն շտալ, ու հեռագիրը հավիտյան կը քննէ: Արդ՝ եթէ մինչև այս բացիկս ձեռքդ հասնելը ոչ քաղաքագլխին, ոչ ալ առաջնորդին որևէ դիմում կամ հարցում եղած չէ հոտ, կը նշանակե գործը ընթացք չէ առած, ուրեմն և կը խնդրեմ բարեկամներես ընեն ինչ որ կարելի է, որպեսզի նահանգապետը նպաստավոր պատասխան մը տա Բերնի դեսպանին: Զեռքս մնացեր է քանի մը հարյուր ֆրանկ, եթէ ամիսամիս ու կես ալ որ ձգձգվի, ալ անկարող կ'ըլլամ հեռանալու մինչև նոր դրամ շտանամ: Այնպես որ սիրելիս, խնդրեմ 700 ֆրանկի չափ փոխադրելու ինծի նորեն, ինչպես գրած եմ և նախորդ նամակիս մեջ, միևնույն է դեռ հոս ըլլամ, թէ մեկնած: Ուրեմն նորեն ցտեսութիւն և այս անգամ ավելի մեծ հույսերով, եթէ նորեն շխարվիմ: Բոլորիդ սրտագին բարևս: Պինդ կը համարուեմ քեզի. Լեոն

Նոր: Leon Segbossian, Av. Druey 24a,
Lausanne

12

1915, հոկտ. 18, Լոզան

Սիրելի Ստեփանս, կը կրկնեմ նախորդ բացիկիս բովանդակութիւնը, վախնալով, որ կրնա ձեռքդ հասած չըլլալ: Հոկտեմբերի 8-ին Բերնի ուս դեսպանը հեռագրած է Քիֆլիզի նահանգապետին, թէ Լեոն Սեղրոսյան Շանթը կ'ուզէ Քիֆլիզ գալ, ճանչված է առաջնորդեն ու քաղաքագլխեն և ուզած է նահանգապետի համաձայնութիւնը՝ արգելք չունենալը: Արդ եթէ մինչև հիմա որևէ հարցում եղած չէ մեր առաջնորդին կամ Խատիսյանին, կը նշանակե ուշադրութեան չէ առնված. ուստի և կը խնդրեմ քեզմե ու բարեկամներես ընեք ինչ որ հնար է խնդրին ընթացք տալու համար, որպեսզի շուտով պատասխան ստանա Բերնի դեսպանութիւնը նահանգապետին: Երբ այս ճամբով գործը որևէ ձևականութեան դեմ առնե ու կարելի չըլլա, այն ատեն կը խնդրեմ Մեսրոպ Եպիսկոպոսեն, որ ուսերեն լեզվով և պաշտոնական բոլոր վավերացումներով օժտված վկայական մը տա ինծի՝ անձամբ ինծի ճանչնալուն և իմ ինքնութիւնս երաշխավորող:

Մնված եմ 1871⁸⁷-ին Պոլիս. երկար ժամանակ ապրած եմ Քիֆլիզ. ուսուցիչ եմ ու գրագետ. ամուսնացած եմ Քիֆլիզ. հիմա ընտանիքով կ'ապրիմ Լոզան: Այս վկայականը դուն ղրկե՛ ինծի. կարելի է ատոր վրա հենված դեսպանը անցաթուղթ տա, պզտիկ հույս մը ունիմ: Թեև այսպիսով խնդիրը չափազանց պիտի ուշանա, բայց դեսպանատունները ինծի սորվեցուցին արդեն ժամանակի ավելի երկար չափերու գործածութիւնը: Սարսափելի խիստ են հիմա ամեն կողմ ու սարսափելի մանրազնին ու խստապահանջ:

Ձերմ բարևներս բոլորիդ ու կարոտի համբուլներս քեզի՝ Լեոն

Նոր: L. Segbossian, Av. Druey 24a,
Lausanne

Սիրելի Ստեփանս, քու երկար նամակիդ շատասխանեցի, կը կարծեի քանի մը շաբաթեն մտող ըլլամ, ահա՛ կանցնին ամիսները ամիսներու ետեւին և արդեն կտրած եմ հուլիսս փետրվարն առաջ-Քիֆլիդ հասնելու, թեև միշտ անհամբեր կ'ըսպասեմ քեզմէ լուրի մը իբրև պատասխան նախորդ նամակներու: Միայլ ես, եթե կը կարծես, թե մենք հոս եկանք տղոցս լավագոյն կրթութիւն մը տալու ցանկութեամբ. ես բնավ հիացած չեմ հոստեղի դպրոցներով, դեռ ընդհակառակը: Սաստիկ հոգնած էի ու զգլած Պոլսեն, կ'ուզեի մեկ-երկու տարի ինքզինքս ամբողջովին նվիրեմ գրականութեան և մանավանդ Վիզենս⁸⁸ արմատապես բժշկեմ. բուկարական պատերազմեն անմիջապէս ետքը կ'ուզեիք հեռանանք Պոլսեն, նյութապէս անկարող էի, ու մնացինք. «Հին Աստվածներու» հաջողութիւնը կարելի դարձուց իմ ու Զավոյի ցանկութիւնը և երեք տարվան ծրագրով եկանք Հոգան: Այս պատմութենէն պիտի տեսնես, որ հիմա դեռ կենդանի ըլլալս պարզապէս կը պարտիմ «Հին Աստվածներու», առանց անոր բերած 3—4 հազար թուրքիին ես տեղես երթալ չէի կրնար և հիմա իմ բոլոր Պոլսի ընկերներու ու ծանոթներու հետ միասին ո՛վ գիտե եր լեռան գլխուն մորթված կ'ըլլայի. զարմանալի խաղեր ունի բաղդը: — Կը մտածեի՛ այս ամառ ընտանիքով վերադառնամ Կովկաս և հուլիսս դեր էի ուրիշ շատ շատերուն հետ միասին Դարդանելի բացման վրա: Չեղավ. այդ միջոցին ուսները գրավեցին Վանը. վճռեցի անմիջապէս ԵՍ երթամ Վան, թե՛ կրթական լուրջ գործ մը կրնայի գլուխ բերել հոն և թե՛ ինքս կը տեղավորվեի, և մինչև տարի մը, կը մտածեի, կու գան Զավոն ու տղաքս: Վերջին դժբաղդ նահանջն ու գաղթը հազարավորներու կյանքին ու ծրագրին հետ միասին կտրեց և իմ ծրագիրս: Մտածեցի անմիջապէս գամ գաղթային այդ շարժման միջոցին բանի մը պիտանի ըլլալու հուլիսով, դիմեցի Ժընև ուս կոնսուլին անցագրի, լսին սկտք է դիմել ներքին գործոց նախարարին: Ժամանակ չկորսնցնելու համար միացա ուսանող կամավորներու խմբին, որու անմիջական մեկնումին ամեն տեսակ դյուրութիւն խոստացեր էր Բերնի դեսպանը. շաբաթներ շաբաթներու ետեւ լարված ու անհամբեր սպասում, ամեն պատրաստութիւն սեւեւված «հառաջիկա շոգենավով» մեկնելու, «հաջորդ շոգենավով». ո՛չ մեկ պատասխան. բալկաններու ճամբան գոցվեցավ: Այլ հուլիսս կտրած դիմեցի ինքս անձամբ անհատապէս Բերն դեսպանին, որը վերջապէս համաձայնեցավ տալ անցագիր եթէ Քիֆլիդի նահանգապետին համաձայնութիւն ստանա, ինչպէս որ նախորդ նամակներու մեջ մանրամասն դրած եմ քեզի: Ահա՛ հիմա նստեր եմ ու կ'ըսպասեմ հոռ ձեր օգնութեանը, որ նահանգապետին նշատատավոր հեռագիր մը գա Բերնի դեսպանին: Եթե ատրկա չի հաջողեցավ, կը խնդրեմ Մեսրոբ եպիսկոպոսը պաշտոնական թուղթ մը ղրկե ինձի, վկայող ու տեսակ մը երաշխավորող իմ ով ըլլալս: Դեսպանի հետ խոսակցութեանս միջոցին բերնեն թռավ, թե «գորնե, այ, եպիսկոպոսեն թուղթ մը ունենայիր». ըսի որ անմիջապէս հեռագրենք ե՛ս կամ ինքը. կըմկմաց թե ավելորդ է, ջանի որ հիմա նահանգապետին է հեռագրելու արդեն: Այնպէս որ Մեսրոբ սրբազանի թուղթը թեև կը խնդրեմ, բայց մեծ հուլս չունեմ, փորձ մըն է. հիմա շատ է խոստացած հոս անցագրային, ճամփորդական ու սահմանն սահման անցնելու խնդիրները: Այնպէս որ պետք է ավելի լուրջ միջամտութիւն, և կը կարծեմ, ամենն ուղիղ ճամփան Պետերբուրգ է, ներքին գործոց նախարարութիւն. Պ. Բաբաջանյանը⁸⁹ թեև անձամբ չեմ ճանչնար, բայց գրելու ու խնդրելու եմ իր միջամտութիւնն ու

ժանդակությունը. դժվար թե մերժե. բայց նախապես կ'ուզեի գիտնամ՝ թե դուք ինչ ճամբով կ'ուզեիք շարժվիք, դուք Հոգոտեղի սրայմաններն ու կապերը ունիք աչքի առաջ, այնպես որ կը ցանկամ ձեր հրահանգովը շարժվիմ. օրինակ Բարաջանյանին գուցե ավելի հարմար է ձեր կողմեն դիմում մը, կամ գուցե ուրիշ անձի մը. վերջապես ինչ որ իմ ձեռքես կու գար, ես ըրեր եմ, հիմա հույսս արդեն բոլորովին ձեր վրա է, Կովկասի իմ բարեկամներու: Այսքանը միայն քեզի ըսեմ, որ իմ Կովկաս գալս բացարձակապես անհրաժեշտ է, որովհետև պարզապես ապրուստի միջոց չունիմ: Անցած տարի դիմացանք շնորհիվ Զավոյի մեկ-երկու թղթերուն⁴⁰, որոնց դեմ կրետի ունինք հոս բանկը. պատերազմի առաջին ամիսներուն կրետին ընդհատեր էին, բայց վերջը բարեբախտաբար բացին նորեն. 2000 Ֆրանկի շափ ստացեր եմ հունկե, մնացածն ալ զրկեր ես դուն ապրեր ենք ատով: Հիմա բոլոր թղթերը գրավ են բանկը և 4000 Ֆրանկ պարտք կա վրաս. ուրեմն ցամքած է վերջնապես այդ աղբյուրը: Կը մնա միայն քեզնե ստանալիքս, որը քու հաշվի համեմատ հաղիվ կը հասնի 1500 րուբլու, դեռ կեսնն ավելին ալ վիրցնելով մեր դրամագլխեն իբրև պարտք. այդ գումարին 300-ի շափ արդեն զրկած ես (վերջին հազար Ֆրանկին մեջը), 300 րուբլու շափ ալ պետք է մեկդի դնեմ իբրև իմ գալուս ճամբու ծախք. մնացածը հաղիվ հերիք կ'ընե մեր տանը ապրուստի մինչև մայիս: Ինչքա՞ն ալ ամեն ավելորդ ծախք կրճատած ենք, բայց և այնպես ամսական 400 Ֆրանկեն պակաս ապրիլ անկարելի է, հոս ալ սղված է հիմա ամեն բան. 400 Ֆրանկը նորմալ պայմաններու մեջ 150 րուբլի ըսել է. իսկ հիմակվան կուրսով 200 րուբլիեն քիչ մը ավելի: Եզրակացությունս՝ 1) կը խնդրեմ անմիջապես ինձի դրամ փոխադրես, եթե մինչև այս նամակ ստանալդ արդեն փոխադրած չես. փոխադրե 1000 Ֆրանկ. եթե կրնաս, եթե ոչ՝ գոնե 700, Հիմա իմ ձեռքս 500 Ֆրանկ դրամ կա ընդամենը՝ իմ բոլոր հարստությունս, որով կը դիմանամ մինչև դեկտեմբերի կեսերը ամենեն շատը, բայց կրնաս երևակայի՞ր՝ թե ինչ անախորժ դրություն է աշխարհքի մեկ ծայրը մենակ ինկած ընտանիքով արդի իսխուստ քաղաքական պայմաններու մեջ մեկ ամսվան ապահովություն միայն ձեռքդ: Այս ալ ըսեմ, որ Թուրքիան այլ ևս չի նորոգեր հայերու անցագիրները, իր գլխովը դպչի, որով ես հիմա զվիցեբրական պետության հանդեպ անհայրենիք եմ, և արդեն ինձնե երաշխավորություն կը պահանջեն. 1500 Ֆրանկ պետք է դնել բանկը՝ բնակության թուղթ ստանալու համար. ինձի 3 ամիս ժամանակ տվին, որ կը լրանա հունվարին, և նորե՞ն գլխուս ցավ եմ ունենալու: Անշուշտ ինձի փողոցը չեն նետեր, եթե այդ չունեցած 1500-ը իրենց չհանձնեմ, բայց կ'ըստեղծվի մանր-մանր անվերջ անհամություններ, ինչպես ըսի հոս ալ հիմա սաստիկ խիստ են ու մանրախնդիր. չորս կողմեն ամեն տեսակի մարդեր թափվեր են Զվիցերիա, և պարզ է, որ կառավարությունը անհանգիստ է ու կը վախնա իր մեջեն ավելորդ բեռն: 2) կը խնդրեմ անմիջապես դիմեք զորեղ միջամտության հնար եղածին շափ շուտ ներքին դործոց նախարարութենեն իմ մուտքիս թույլտվությունը ստանալու համար. և հայտնեցե՛ք ինձի՝ ինչ որ պետք է ես ընեմ հոսկե:

Կ'ըսես՝ Սուրբիկը թարգմաներ է «Հին Աստվածները». շա՛տ ուրախ եմ. հոս փնտռեցի «Рус. мисль»-ները՝ մեջը չկար⁴¹. միայն մեկ թիվ էր պակաս. միթե՞ հենց այդ թվին մեջն է ըլլալու, թե՞ գուցե շտպվեցավ դեռ: Կ'ուզես, որ զրկեմ քեզի և նոր դրամաս: Նոր դրամաս պատրաստ է բոլորովին, անունը «Օհան Գուրգեն»⁴² (փոխնցի հին վերնագիրը), բայց հիմա ի՞նչ ժամանակ է գրական երկ հրատարակ հանելու. ո՞վ գլուխ ունի. իրա՞վ է որ մոմենտի հետ ունի քանի մը առնչություն, բայց չէ՞ որ էականը զուտ գրական աշխատություն է. հիմա բեմի վրա ուրիշ տեսակ երկերու պահանջը կա. հիմա

դեռ ոչ տպելը արժե, ոչ թարգմանելը, ոչ ալ ներկայացնելը. թող անցնի այս ցավն ու պատիժը մեր աշխարհի վրային՝ վե՛րջը: Սուրբիկի թարգմանության վրա իզուր ես գրեք «միա՛կ» հեղինակե ընդունված թարգմանություն. օրինական տեսակետն ո՛չ մեկ կարևորություն չունի. եթե թարգմանություն մը տրված է՝ օրենքի առաջ կը նկատվի արդեն իսկ հեղինակի կողմն ընդունված, թե չէ ենթարկված կ'ըլլար դատաստանի ու գրավված: Իսկ բարոյական տեսակետն շատ գոհ կ'ըլլայի այդպես ընդգծելուդ արդեն հրապարակ հանված թարգմանություններուն հանդեպ, միայն կը վախնամ, որ դեռ չհրատարակած թարգմանիչներս վիրավորվին և տեսակ մը կողմնակի արգելք նկատեն իրենց դեմ իմ կողմես: Եթե գրած ըլլայիր «առաջին», փոխանակ «միակի», մեջտեղը հարց չէր մնար: Ինչևէ. հուսա՛նք, որ ավելորդ ըլլա վախս: Իսկ իմ սիրելի թարգմանչուհիս ջերմ ու պինդ համբույրս: Գալով լուսաբերներու հարցին, վստահ եմ, որ քանի մը ամսվան մեջը կրնանք լրացնել ու սրբագրել բոլոր տարիներն ալ իրենց հավելվածներով, եթե նույնիսկ ես Թիֆլիզ ալ չմնամ. բավական է մեկ-երկու շաբաթ միասին ըլլանք աշխատանքին սկիզբն ու վերջը. ունիմ բավական մտածած բաներ և թեթև փոփոխումով շա՛տ ավելի կարելի է կենդանացնել այդ գրքերը, պետք է մեկ-երկու ամիս վրան թուփս նստիլ, ուրիշ ոչինչ, եթե միայն այս անիծած պատերազմը ինծի Կովկաս մըտնելու թող տա և մարդու մեջ ալ խելք ու տրամադրություն թողնե: Առողջ եղեք, Անհամբեր սպասելու եմ քեզմե լուրի. Լևոն

1915, նոյեմբեր 12, Լոզան

Սիրելի՛ Ստեփանս, երկու օր առաջ ստացել եմ զրկած 700 ֆրանկդ. երեկ ալ եկավ Կովկաս վերադառնալու թույլտվությունս. հավանորեն ամսուս 17-ին ճամբա կ'իյնամ Լոզանեն և եթե ճամբին ավելորդ անախորժություններու կամ ուշացումներու չենթարկվիմ, 8—10 օրեն կ'ըլլամ Պետրոկրատ, այսինքն արևելյան ստիլով նոյեմբերի 4—5-ին: Եվ իմ կամքովս մնալ չեմ ուզեր ո՛չ Փարիզ, ո՛չ Լոնտոն և ո՛չ ալ որևէ ուրիշ քաղաք: Եթե շատ ցուրտ ըլլա, կարելի է օր մը— երկու մնամ Պետրոկրատ կամ ավելի հավանորեն Մոսկվա: Ո՛ւր է հիմա Սրբուհին, Թիֆլի՞զ թե Մոսկվա. եթե Մոսկվա է՝ հեռագրե իմ անունիս poste-tert Մոսկվա իր հասցեն (եթե այս բացիկս նոյեմբեր 3—4-են առաջ հասնի քու ձեռքդ): Բնականաբար ինքս ալ կը հարցնեմ ու կը փնտռեմ, տժրադճաբար ո՛չ մեկ ծանոթի հասցե չունիմ ձեռքս: Այսօր քու անունիդ պոստին կը հանձնեմ նոր դրամաս՝ «Հասկերու» հասցեով. միասին վերցընել կարելի չէ՝ անծանոթ լեզվով ամեն թուղթ ու գիրք վար կը դնեն սահմաններուն վրա: Կը խնդրեմ, որ ո՛չ մեկնուն ձեռքը չտաս. պահե՛ քեզի Գե՛, սիրելի՛ս, հույս ունիմ 2—3 շաբաթեն կ'ըլլամ մոտդ. բայց բան է, եթե շատ ուշացա կամ որևէ դժբաղտություն պատահի հետս, ո՛վ գիտե, պատեթազմի տարի է, կը խնդրեմ, որ անմիջապես հարաբերություն մտնես Զավոյի հետ, և վստահ եմ, որ կը հոգաս իր և տղոցս միասին, ինչպես քու հարազատ քրոջդ ու զավակներուդ մասին: Զերմ ու կարոտով կը համբուրեմ քեզի ու քուկիներդ ու կ'ըսեմ՝ ցտեսություն

Լևոն

Նոր: L. Segbossian, Druey 24a
Lousanne

1915, նոյեմբեր 26, Լոզան

Սիրելի Ստեփանս, ահա՛ զերջապես ձեռքս է իմ նշանավոր անցագիրս, և բոլոր ձեռագրությունները կատարված. վաղը չէ մյուս օրը (նոյ. 28) ճամբար կ'ելնեմ. եթե նոր անակնկալներու չպատահիմ, երկու օրեն կ'ըլլամ Լոնտոն, ուր պետք է մնամ քանի մը օր դուցե և ավելի. երկու անգլիահայատակ պետք է երաշխավորեն, ֆորմյուլարներ պետք է լեցընել ու օրեր պետք է սպասել, որ իրավունք ստանաս Հյուսիսային ծովը անցնելու. անկե անդին ալ կ'ըսկսի ցուրտի թագավորությունը: Բայց հույս ունիմ, որ պատերազմի ու [...] բոլոր արգելքներուն վրայեն և հյուսիսի բոլոր մայրաքաղաքներուն մեջեն սլանալով մինչև ամիս մը հասնիմ Թիֆլիզ: Բարև կամ որևէ հանձնարարություն չունի՞ս Հյուսիսային Բևեռին: Իսկ իմ սիրո ու կարոտի բարեներս թե՛ քեզի, թե՛ տիկին Կատարինեին. համբույրս Լոնին, Սրբուհիին ու Նազիկին: Կը հուսամ հանդիպիմ բոլորիդ առողջ ու լավ տրամադրություններ: Ուրեմն, Ստեփանս, ցտեսություն. ջերմ համբույրով՝ Լոն:

Exp. L. Segbossian

Av. Druey 24a Lousanne

[1915, դեկտեմբեր 10, Լոնդոն]

Սիրելի Ստեփանս, ահա՛ շաբաթ մըն է՝ Լոնտոն եմ, ամբողջ օրը կը թափառիմ ու ձեռքիս դրամը կը հայեցընեմ. այս մարդիկը ինձի Անգլիա մտնիլ թողեցին, բայց Անգլիային ելնել թույլ չեն տար. առանց պատերազմական նախարարութենեն permit ստանալու ոչ ոք նավ մտնիլ չի կրնար, իսկ այդ permit-ը մերժեցին ինձի, Զվիցերիային եկողներուն դեմ մասնավոր խտրություն կա. բնականաբար իսկույն դիմեցի ռուսական դեսպանատանը, անոնք ալ նորեն հասցեներ ուզեցին ինձնե ինքնությունս ապացուցող, հեռագրեցին Թիֆլիզ, դեռ պատասխանները պետք է գան, որ տեսնենք ինչով պիտի վերջանա այս հետաքրքիր պատմությունը: Ծս կը հաշվեի, որ ձեր ստիլով դեկտեմբերի առաջին կեսերուն հոտ ըլլամ, այսպես որ շարունակվի դեկտեմբերի վերջերը հազիվ հասնիմ. գլուխը քարը՝ ես հոս դեռ շաբաթ մը երկու կրնամ դիմանար ձեռքիս դրամովը, բայց ինձի անհանգստացնողը մեր տունն է. ես Զավոյի ձեռքը քիչ դրամ եմ թողած և Կովկաս հասնելուս պես առաջին գործս դրամ պիտի փոխադրեի. բայց հիմա որ այսպես կը ձգձգվի իմ գալս՝ ստիպված եմ նորեն քեզի գրելու: Կը խնդրեմ, Ստեփան, ինչքան որ կրնաս փոխադրե՛ իսկույն. փոխադրե նույն ճամբովը, ինչպես մինչև հիմա փոխադրած ես, միայն բնականաբար Լոն-ի փոխարեն կը գրես Զավո: Ու գամ տեսնեմ, մինչև ուր է հասեր իմ պարտքս և ինչպես պիտի դուրս գամ այդ պարտքերուն տակեն: Ճամբիս, Լոնտոնի ու մյուս տպավորություններու մասին բերանացի: Զերմ համբույրներս բոլորիդ. Լոն

1915, դեկտ. 26, Պետրոկրատ-կայարան

Սիրելի՛ Ստեփանս, ցուրտ ու գիշեր, ձյուն ու գիշեր, և անիվներ, անիվներ, որ կը դառնան ու կը դառնան, և սենյակ մը՝ տարօրիակ լուսեղբով,

բազմությամբ ու ծխախոտի ծուխով լեցուն, որ այդ բոլոր աղմուկին, գիշերին ու ձյունոտ եղևնիներուն մեջեն կը վազե ու կը վազե. ինքն ալ չգիտե ո՞ւր, ինչո՞ւ, ինչպե՞ս... ահա քեզի իմ այս վերջին շաբաթս: Պետությունեն՝ր, սահմանեն՝ր, դրամեն՝ր, մայրաքաղաքեն՝ր, և՛ խուզարկություն, և՛ մաքսատուններ, նորեն քննություն, նորեն խուզարկում. ալ գտվեցանք, մաքրվեցանք դարձանք 95 աստիճանի քաղաքական մաքուր ալքոհոլ, գոնե պայուսակներս ու թղթերս: Առայժմ այսքան. մնացածը բերանացի, գլուխս հիմա այնպես կը դառնա, որ առանց մեծ դժվարության կարելի է գործածել իբրև վակոնի անիվ: Օր մը մնալու եմ Ռոստով, քանի մը օր Աբրահամին⁴⁵, հոնկե ալ քեզի կը գրեմ ու կ'իմացընեմ դալու օրս: Համբույր ու բարև բոլորիդ. Լևոն

18

[1916, փետրվար 15, Բագու]

Ստեփան ջան, քնիներեղ իմացա, որ Լևոնը մեկներ է մայրաքաղաք. ուրեմն այդպես վճռեցիք ղինվորագրության հարցը. անշուշտ ստուգած ես նախապես: Կը շնորհավորեմ էրզրումի գրավումը, որու կարևորությունը մեզի համար անչափ է. միայն նախորդ դեպքերը տարօրինակ վախ մըն են դրած մեջերնիս, որ կը խանգարե սրտանց ուրախանալու⁴⁴: — Թուղթ հոս չկա, եկած օրս իսկ գացինք հարցնելու. արդեն անշուշտ հասկցեր ես, որ ըլլար՝ իսկույն կ'իմացընեի: Կարգադրե՛ հոտ, ինչ ձևով որ կարելի է [. . .] վրա հույս մի՛ դնիր: — Իսկ ես Զավոյեն նորեն լուր շունիմ, երևի այդպես է ըլլալու շարունակ: Դրամ փոխադրեցի՞ր և ինչքա՞ն: Կը խնդրեմ, որ «Գիրը» ղրկե ինծի իմ հաշիվս. այլև հետևյալ գրքերեն, որը որ ունի 1) Նաչատրյանի Աс-тория Армении. այլև կարծեմ ունի ուրիշ գիրք մը Աբրահամիններու մասին. 2) Նաղաշ Հովնաթան, 3) Չոպանյանի հրատարակած միջնադարյան էջերը, 4) Վարուժանի Հեթանոս երգերը: Թող ղրկե իմ հաշիվս և Աբրահամի հասցեով (Романовск. 20 III). իսկ դուն ի՞նչ ուրիշ գիրք մը կրնաս խորհուրդ տալ հայոց պատմության մասին ամփոփ ու գիտական արժեքով. եթե բան մը գիտես՝ ան ալ ղրկել տո՛ւր: — Տիկին Կատարինեին ու Նազիկին իմ սրբտապին բարևներս. կ'երևակայեմ հիմա ձեր աշխատանքը, որ բոլորովին միանակ մնացիք: Խնայեցեք ձեր առողջությունը և եղեք ուրախ: Սրբուհու նամակը, իհարկե, դեռ գրեմ պիտի: Ջերմ համբույրներով՝ Լևոն

19

1916, մայիս 8, Բագու

Սիրելի՛ Ստեփան, քու տված հանձնարարությունները, ինչ ըսել կ'ուզե, մոռցած չեմ, և եթե մինչև հիմա չեմ պատասխանած՝ պատճառը տալիք պատասխանիս անորոշությունն է. կ'ուզեի կտրուկ ըլլար ըսելիքս, որ չեղավ: Նախ՝ քու հողիդ Պատմությունը. Վաչյանցը ինքը իր մասը չի՛ ծախեր. «Ինչ իմաստ ունի ծախելը, քանի որ հողը բարձրացնելու է իր արժեքը». գալով Առաքելովներին՝ կենդանի է կինը, և ունի զավակներ. խնդրած եմ մեկ-երկու հոգիե, որ իմանան՝ ո՞վ է անոնց իրավասուն, և ի՞նչ վիճակի մեջ են հիմա անոնց գործերը. խոստացեր են, ըսեր են՝ դյուրին բան է, բայց մինչև հիմա պատասխան մը տալ չեն կրցած: Իսկ Թորոմանյանին⁴⁵ մինչև հիմա դրամ ղրկած չէ. մենք ուղարկելու էինք Զատկին, երբ Տիգրան Հովհաննիսյանը⁴⁶

հեռախոսով դիմեց ինձի, հարցուց Թորոմանյանի մասին և հայտնեց, որ Գրասիրաց ընկերությունը ցանկանում է նրան հարյուր ռուբլի փոխադրել անմիջապես: Բնականաբար շատ ուրախացա, խոսեցա պետք եղածը, ավելի քաջալերեցի և տվի Թորոմանյանի հասցեն, որ «հաջորդ օրը դրամը փոխադրվի»: Այդ կողմեն ապահով՝ խոսեցիք Տիգրանի⁴⁷ հետ, որ մենք ալ կ'ուղարկենք մեկ-երկու շաբաթ վերջը ամառվան ամիսներուն համար. հաշվեր ենք՝ երեք ամիսը երկու հարյուր ռուբլի մեկ տարվան խոստումով: Եվ ահա՛ նոր կիմանամ, որ Գրասիրաց ընկերությունը դեռ ոչինչ չէ ուղարկած. իբրև թե ուզեցի է կապի դասախոսության մը հետ, որ «ցանկալի էր կարգար Թորոմանյանը Բագու»։ հա՛րց, որու մասին ես երկար բացատրություններ արդեն տվեր էի Հովհաննիսյանին, և որ առայժմ մեկ կողմ էր թողված. ինչևէ. հիմա Տիգրան Հովհաննիսյանը ըսավ, որ իսկույն կը փոխադրե առանց որևէ պայմանի: Կը փոխադրենք և մենք շուտով. ես արդեն փոխադրել տված կլինեի մինչև հիմա, բայց Տիգրանը հիվանդ էր երկու շաբաթ, հիմա ալ Հեղինեն⁴⁸ է հիվանդ երկու շաբաթի իվեր: Պետրոկրատեն վերադարձիս կ'աշխատեմ անպատճառ հասցընեմ այդ դրամը, եթե մինչև գալս Տիգրանը ղրկած չըլլա: Ես բնականաբար մեր բյուրոյի ընտրած ներկայացուցիչներեն մեկն եմ⁴⁹, և վաղը երևի կը մեկնինք. կը տեսնեմ Լևոնդ, դարձիս այս անգամ անշուշտ կը մտնիմ Մոսկվա Սուրբիկը համբուրելու: Վճռե՞ր եք ձեր ամարանոցի հարցը. շատ լավ կ'ըլլար, որ քանի մը շաբաթ միասին ըլլայինք և լուսաբերները մեջտեղեն վերցընեինք վերջապես. դեռ տեսնեմ, չգիտեմ ինչպես պիտի ըլլա իմ բանս: Գիտես, որ հոս ամսագրի մը հարցը կար. համոզվեցա, որ այդ տեսակ խառնակ կազմի մեջ ես աշխատել չեմ կրնար. չե՛մ համաձայնելու. և դեռ հենց գործը ինքն ալ վերջնապես կազմակերպված չէ. մեկ խոսքով՝ դատարկ բան է, սրտակցություն ու գործի սերը չկա մեջը: Այնպես որ աշնանը չգիտեմ ինչ եմ ընելու. խոսե անգամ մը լուրջ Հանեսի հետ, շա՛տ կը կրկներ, թե դրամագլուխ կրնա գտներ ամսագրի համար. եթե երկու տարվա ընթացքին 20000 մը ապահովվեր՝ երկու տարով կրնանք կապվեր, ես ու Նիկոլը⁵⁰ կ'անցնենք գլուխը, կը խմբվինք և սիրուն գործ կարելի է ստեղծել: Բայց Հանեսի պարանովը հոր իջնել կարելի՞ է: Իսկ ուսուցչությունը, կը մըտածեմ, ի՞նչ պիտի տա ինձի. գոնե ամիսը 250 ռուբլի պետք է ստանամ, որ մյուսների հետ միասին ծայրը ծայրին բերել կարողանամ: Մեկ խոսքով օդի մեջ եմ նորեն, ինչպես միշտ եղեր եմ: Կը հուսամ առողջ է Կատարինեն, նրան նույնպես: Բարևներս ու համբուլրս: Լևոն. Ջավոյեն նոր նամակ առի, լավ են: Լավ է և Վիգենը, բայց հոգ կպահանջե և խնամք. պիտի ջանամ ձմեռը ղրկել տամ սարը:

1916, մայիս 28, Բագու

Սիրելի Ստեփանս, շատ-շատ բարև ու համբուլր քեզի Լևոնեդ ու Սրբուհիեդ. շաբաթ մը Պետրոկրատ էի, շաբաթվան մը շափ Մոսկվա: Լևոնի տրամադրությունը սկիզբը շատ լավ էր, պատմեց ինձի իր առաջիկա ամառվան ծրագիրը, մտադիր էր մնա իր տեղը ու աշխատի. ելավ գորակոշի նոր կարգադրությունը ուսանողների վերաբերմամբ, ու ամեն ինչ դարձավ տակնուվրա: Իսկույն դիմեց պրոֆ. Մարին⁵¹ և փորձեց մտնի անոր կազմակերպած Անիի արշավախմբին մեջ, որ քանի մը ամիս ժամանակ շահվի. կամ կը մտածեր քաղաքներու միության կողմից երթա նոր գրավված հայկական վայ-

րերը. դեռ պատասխան չունեն, որ ես մեկնեցա Պետրոկրատեն. վերջը գրեց Մոսկվա, որ Անիի պատմութիւնն համար արդեն ուշ էր, և որ ինքը վճռեր է մայիսի վերջը ճամբա ելնել Կովկաս զինվորական վարժարան մտնելու: Սըր-բուհիդ դարձեր է խելացի ու հասուն աղջիկ. երբ իրեն հետ երկար-երկար կը խոսեինք, զարմանալի կերպով ինձի իմ պատանութիւնս կը հիշեցնէր, կյանքիս թարմ տարիները. նույն կանուխ հասունութիւնը գիտական աշխարհին մեջ, նո՛ւյն փիլիսոփայական հակումը կյանքին հետ շփվելու ատեն, նո՛ւյն գեղարվեստի հափշտակութիւնը իր ձգտումներուն մեջ ու նո՛ւյն կյանքի ծարավը իր սրտին խորքը: Գտա ինքը իր վերջին քննութիւններուն վրա. Մոսկվային մեկնելու օրս տալու էր վերջնաթեր քննութիւնը, իսկ մայիսի 26-ին վերջինը. երևի այսօր կամ վաղը Լեոնի հետ միասին ճամբա կ'իյնան. թեև ինքը կը ցանկար շաբաթ մը ավել մնա իր պարի ուսուցչուհու պատճառով, որը երկու շաբաթի իվեր տկար է թոքերի բորբոքումով. չէր ուզեր ձգել այդպէս հիվանդ ու մեռնակ: Շատ լավ տպավորութիւն ըրավ իմ վրաս այդ անպայման տաղանդավոր կինը. Սրբուհու հոգին ունի այդ կինը, միայն ավելի շփված ու ավելի բացված. չէ՞ որ 27 տարեկան է արդեն ու կին, թեև բոլորովին աղջիկ կը նմանի. այդ հոգեկան խոր ու ներքին քույրութեան վրա է հիմնված արդեն նորա ու Սրբուհու մեջ եղած հարաբերութիւնը, որը իսկպէս երկու ընկերուհու մեջ եղած կապ է: Գալով իրենց պարհին⁸⁸, անտարակույս որ խիստ հետաքրքիր ու խիստ ազնիվ ճիգ մըն է բուն գեղարվեստի աշխարհին մեջ. թե ատկե ի՞նչ պիտի դուրս գա Սրբուհու համար, ճշմարիտ չգիտեմ և անկեղծ խոսելով չե՛մ ալ ուզեր, որ բան դուրս գա. միայն պիտի խոստովանեմ, որ այդ բոլորը հրաշալի մարզանք է թե՛ մարմնի և թե՛ հոգու ճկունութեան, առողջութեան, այլև ճաշակի:

Հիմա անցնեմ իմ պարիս: Կարծեմ արդեն ժամանակ է «Կայսրը» աշխարհ հանելու: Եվ ատոր համար նախ երկու հարց կա վճռելու: Ամենն առաջ դրամականը. ես դրամ չունիմ պառկեցնելու, իմ ձեռքս անցածը վազող դրամ է, նստելու համար անգամ ժամանակ չունի, ուր մնաց պառկելու. այնպէս որ Կայսրս ստիպված է արդեն քու ձեռքդ համբուրելու պարտքով ու վարկով մամուլի տակեն անցնելու համար. ծավալը բանաստեղծական ու տնտեսագիտական բոլոր միջոցներս գործ դնելով հույս ունիմ «Հին աստվածներու» 96 երեսին⁸⁹ հավասարեցնելու կամ շատ-շատ 104. քանի օրինակ տպելը կը հանձնեմ քու փորձառութեանը. գրքի դիրքը «Հին աստվածներունը». թուղթը կը ցանկայի, որ փայլուն շրջար, հաստ ու թեթև, ավելի ծծուն թղթի նմանող. իսկ եթե պատերազմը չի համակերպի իմ թղթիս, կը մնա, որ իմ թուղթս համակերպի պատերազմին. այս սկզբունքներով առաջնորդված գե՛ն՝ հարկ եղած թուղթը: Ես վաղվընե սկսած կ'ըսկսիմ սրբագրել նորեն ավելի խնամքով, հնար եղածին չափ տառասխալներե խուսափելու համար շարողի կողմեն: Երկրորդ հարցը քու ամառանոցիդ հարցն է. ե՞րբ եք երթալու և ո՞ւր. հնար պիտի ունենա՞ս հովանիիդ տակը պահելու տպագրութիւնը. գործի ամենն տաք ժամանակը դուցե հաջողեմ 10—15 օրով գալու Քիֆիդ, բայց ավելին հույս չունեմ: Լուսաբերներուն համար ալ հարկ է, որ գոնե երկու շաբաթ մը միասին ըլլանք: Երբ իմանամ ամառը ուր ըլլալդ, մնացածը ես կը հաշվեմ ու կը ջանամ կերպ մը հարմարեցնեմ, աչքի առաջ ունենալով և քու ցանկութիւնդ: Գալով առաջիկա տարվան դեռ ոչինչ չգիտեմ. արդեն գրեմ եմ քեզի, որ ուսուցչութեանն, մանավանդ տեսութեանն կը խուսափեմ, կը վախենամ, որ կ'ուտեմ բոլոր ուժերս. օրական մեկ կամ երկու ժամ դաս իբրև հավելյալ աշխատանք անկարելի չէ, բայց պետք է նախ հիմնական աշխատանքը ճարվի. ինչպէս գրեմ եմ միա՛կ, այդ տեսակ գործը, որ թե՛ գրական ըլլա, թե՛ ժամանակին պետք և թե՛ ինձի ամբողջապէս շուտե՛՛ ամսագիրն է.

համագումարին խոսեցա նիկոլի հետ⁵⁴, ամեն բան լավ է, պակաս է նորեն փողը. տարեկան 15000 բաց պետք է հաշվել, որը չի գոցվիր բարի ցանկություններով. Բազմի վրա ալ հույս դնել չեմ կրնար. տեղական— ազգասիրությունը դրա ամենն մեծ թշնամին է. թերթը եթե Բագու հրատարակենք՝ գուցե և անկարելի չըլլար այդ գումարը ճարելու: Մեկ խոսքով նորեն օդի մեջ է ամեն ինչ: Երբ Թիֆլիզ գամ, գուցե բան մը պարզվի, ենթադրելով, որ Թիֆլիզ մարդ գտնվի այդ միջոցին: «Կայսր» Սրբուհին ցանկացավ ինքը թարգմանե, բայց թե ինչպես պետք է տպենք, այդ մասին դեռ կը մտածենք. շուտով տպել պետք է հայերենը և ռուսերենի թարգմանությանը համար. թեև ինծի կը թվի, որ երկու բնագիրները միասին հրատարակ հանելը անպատճառ՝ գուցե կարևոր չէ: Թող կոշվի թարգմանություն. ավելի լավ. անախորժ ձեվական կեղծիքը չըլլար. և Սրբուհու անունով ալ կը տպվի: Վերջապես դեռ կը խոսենք: Զերմ բարեններ տիկին Կատարինեին ու քեզի. սրտագին համարույրներով՝ Լեոն

21

1916, սեպտ. 13, Բագու

Միրելի Ստեփան, նախ ինչպե՞ս է առողջությունդ, կը հուսամ կազդուրված ես: Երկրորդ՝ ինչպե՞ս է իմ «Կայսեր» առողջությունը: Կը խնդրեմ, որ կարգադրես և մեկ-երկու տասնյակ ուղարկեն ինծի անմիջապես. ավելի լավ է, եթե հարմար ու մեկու ձեռքով: Ուղարկել տուր մի-մի օրինակ գլխավոր հայ և ռուս լրագիրներուն, այլև հայտարարությունը. բոլորովին պարզ՝ «Լույս տեսավ Լեոն Շանթի նոր դրաման՝ «Կայսր». կը ծախվի այսինչ տեղը, գինը»: Եվ Ավետյանին⁵⁵ ըստ որ հոգա գիրքը շուտով ցրվելու գավառները, նորից թթու չդնե. այդ առիթով գուցե կարողանա և լույս աշխարհ հանել նկուղներեն նաև «Ուրիշի համարը»: Իսկ Բագու կ'ուզե ուղարկի ինքը՝ ուղարկե գրավաճառներուն, կ'ուզե թող ինծի ուղարկե մի երեք հարյուր հատի շափ, ես այստեղ կը հանձնեմ գրավաճառներին, ինչպես որ իրեն համար ավելի հարմար է: Միայն թե շուտ: Եվ բոլորի համար ընդունե իմ ջերմ շնորհակալությունս: Բարև ու համբույր բոլորիդ

Լեոն Շանթ

22

1916, հոկտ. 12, Բագու

Միրելի՛ Ստեփան՛, նախորդ օրը Լեոնդ անցավ հոսակե, իսկ երեկ գիշեր ալ Սրբուհին ճամբու դրինք: Երկու օր միասին էինք կամ ձերոնց մոտ, կամ մեզի, երեկ ճաշին Բեզգադյաններին⁵⁶ էինք: Թարգմանությունը ամբողջովին կարդացինք միասին⁵⁷. ես կը գտնեմ շատ լավ, կը մնա որ ռուսներն ալ նույն կարծիքի ըլլան: Սա ի՞նչ երկար պատմություն դարձավ Լեոնի ոտիսականը. կ'երևակայեմ, ինչպես մտահոգ ես, նույնպես և Կատարինեն. մանավանդ որ Սրբուհու ասեղով՝ դեռ լավ ալ չես կազդուրված. «հոգնած է» կ'սեր: Ես միտքս դրեր էի, նոր տարվան արձակուրդին գամ ձեզի, որ միասին վերջապես ավարտենք ու սրբագրենք մեր լուսաբերները, որոնց մասին ես բավական խոհեմ եմ ու աշխատեթ գլխուս մեջ, բայց քանի որ այդպես հոգնած ես, սիրտ չեմ ըներ առաջարկելու. մանավանդ քենիներդ ըսին ինծի, որ տոներուն մըտադիր են ձեզի «Աւ-քաղաքի սանատորիումը» հրավիրելու: Շատ լավ միտք է. միջավայրի փոփոխում, դպրոցեն, տանեն ու «ծնողներեն» հեռու անշուշտ ավելի կը հանգստանաք երկուքդ ալ: Լուսաբերը այսչափ համբերեր է, թող

քիչ մըն ալ համբերե. թեև իհարկե շատ լավ կ'ըլլար, եթե կարողանայինք ավարտել: Քանի պատերազմը կ'երկարի, իմ այս բաժան ընտանեկան վիճակը ավելի ու ավելի ծանր կը դառնա, և ես չգիտեմ՝ ինչ եմ անելու առաջիկա տարի: Իսկի հիմիկվան ընելիքս չգիտեմ, ինչպե՞ս գիտնամ ապագան: Գիտես, որ «պաշտոնա»⁵⁸ կը ճնշեր ինձի. հիմա գրեթե թողած եմ, անորոշ վիճակ է. ունեմ դասեր, ամսական 120 ռուբլի, մնացածը օդի մեջ: գուցե ստիպված ըլլամ «Արևի» մեջ⁵⁹ աշխատելու իբրև սեկրետար. կը մտածեմ նաև Երևան գրական դասախոսութիւններու շարք մը. այս 8—10 օրվան մեջ պետք է որոշեմ: Քանի կ'երթա կյանքը կը սղե նաև Զվիցերիա և ուղարկածս հետզհետե կը դառնա շատ ծայրը ծայրին: Թեև ամիս մը առաջ 500 ռուբլի փոխադրած եմ, բայց նորեն պետք կա դրամ փոխադրելու: Նոր մեկ-երկու անգամ խաղացին այս տարի «Հին Աստվածները». եթե կարողանաս գանձել այդ գումարները և քիչ մըն ալ վրան ավելացնելով երեք հարյուր ռուբլի փոխադրես Զապոյին շատ ու շատ շնորհակալ կը մնամ. եթե չես կարող՝ խնդրեմ իսկույն տեղեկացուր ինձի, որ հոս կերպ մը ճարել կարողանամ. հոս բանկը փոխադրեց 100 ֆրանկը 57 ռուբլի 60 կոպեկի հաշվով (հոս վճարել եմ 513 ռուբլի 54, հոն Զապոյին հանձնած է 869 ֆրանկ): Հասցեն գիտես՝ Avenue Druey 24:

Գալով «Կայսեր» բեմադրութեան, արդեն դիտես, որ ես չեմ ցանկար այս կամ այն խմբի հետ մասնավոր պայման ունենալ: Ով կուզե թող խաղա. առաջին ներկայացման 20 տոկոսը, հաջորդների 15 տոկոսը. ահա իմ միակ պայման: Կ'ըսես՝ տեկորներու համար շատ ծախք են ընելու. դա իմ ամենեն ավելի ջիղերուս դիպած տեղն է. փոխանակ տեկորներու վրա ծախսելու, թող դերասաններու վրա ծախսին, թող մեկ-երկու փորձ ավելի ընեն. դա ինձի համար շատ ավելի հետաքրքիր է. կարելի է խաղալ և եղած տեկորներով, կարելի է խաղալ և չեղած տեկորներով: Իսկ եթե իրենք հասարակութիւն հրավիրելու համար ավելի տեկորներն են կարևոր համարում, դրանով են ուզում հաճախորդ քաշել, խնդրեմ, իրենց ճաշակը, իրենց հասկացողութիւնը, միայն թող չփաթթեն իմ վիզս: Մերժե՛ միայն տղայական, անլուրջ մարդկանց ներկայացնելու առաջարկը. քիչ-շատ դիրք ու անուն ունեցող դերասանական խմբին ես մերժել չեմ կարող և չեմ ուզեր: Մանավանդ այս տարի, որ քսան կտոր են եղած մեր դերասանները, ինչո՞ւ պիտի տամ այս մեկ խմբին և ո՛չ այն մյուս: Միակ արդարացումը իմ անձնական դրամական շահս կարող էր լինել, եթե որեւէ մասնավոր հավելյալ շահ ունենայի այս կամ այն խմբին մենաշնորհ տալես, այն ժամանակ ինչպես կը վճռեի՝ չգիտեմ, բայց համենայն դեպս, արժեք որ մտածեի: Ինչո՞ւ համար ողջ գլուխս պետք է դրնեմ դերասանական աղմուկներու մեջ. ո՛չ, սիրելի՛ս, բնա՛վ ախորժակ չունիմ: Ո՛չ մեկ կապ, ոչ մեկ միջամտութիւն, որ խումբը կ'ուզե թող խաղա, ինչպե՛ս կ'ուզե թող խաղա. կ'ուզե ոսկի տեկորներու մեջ, կ'ուզե Շեկսպիրի տախտակով՝ մեկ երեսը «անտառ» գրած, մյուսը «պալատ». դա իմ գործս չէ. ինձի հետաքրքրողը միայն կենդանի խոսքն ու կենդանի մտածված խաղն է. եթե դերասանները այդ կենդանութիւն ու մտածումը կը դնեն իրենց խաղի մեջ՝ կ'ըլլամ շատ ուրախ ու շնորհակալ, եթե չեն բերեր կամ չեն կարող. ան ալ արդեն հայոց ազգի բաղդը: — Դե՛, սիրելիս, կը համբուրեմ քեզի, պինդ ու սրտանց ու կը կրկնեմ՝ խնայե՛ քեզի, խնայե՛ ուժերդ: Եթե տոներուն գալերնիդ վճռեք, հիանալի բան կը դառնա. շատ լավ կըլինի: Կատարինեի հետ լուրջ մտածեցեք ու կարճ կտրեցեք. ավելի լավն է՝ իսկի շատածեք ու վեր կենաք ու գաք: Բայց մինչև այն ժամանակ հույս ունեմ անլուր չես թողներ ինձի քու բարի սովորութեամբդ. Լեոն

Ստեփան, չգիտեմ ճշմարիտ ինչպես անվանեմ տպարանի վարմունքը. ես պարտքով, հազար դժվարութեամբ մնացի ամառը Թիֆլիզ ու տպեցի գիրքը⁶⁰. հիմա հրեք ամսվա ընթացքում չեն կարողանում 1000 օրինակը կտրել տալ: Հավտամ, որ կարելի չէ: Ամեն կողմից պահանջում են գիրքը. վաղը երբ կսառի պահանջը, նոր կու գան գրքերը գրավաճառի դարակների վրա քնելու համար: Խոսե՛, խնդրեմ մի անգամ տեր-հորը⁶¹ հետ և եթե արդյունքի հասնես, հայտնի «Գրին», որ անմիջապես չորս հարյուր օրինակ ուղարկե Բագու Посредник-ի հասցեով: Մեկ-երկու շաբաթ առաջ քեզ նամակ եմ գրած, ուր խնդրած էի 300 բուրլի փոխադրես Զավոյին, չգիտեմ ստացել ես նամակս: Իսկ ինչպե՞ս ես դուն, քու առողջութիւնը, նաև Կատարինեի: Միշտ հույս ունեմ, որ տոները միասին կը լինենք. ջերմ բարևներս ու համբույր. Լևոն

Ստեփան ջան, հի՛ն պատմութիւն, Փարա պիտի ըլլա ինծի ղրկելիք, որ քեզմե նամակ ստանամ: Թեև կը խոստանաս «այս շաբաթ» երկար նամակ գրելու, բայց գիտնալով, որ քու շաբաթը հաճախ 50—60 օր ունի, չեմ սպասեր քու նամակիդ: Շատ: մեծ ցավով իմացա, որ արձակուրդին չես գնացած Բաթում. չէ՛, սիրելիս, դուն քեզի խնայելը շտորվեցար և լոզուր, խելոք չէ ըրածդ: Ինչպե՞ս է հիմա առողջութիւնդ, Լևոնդ ալ չպատասխանեց նամակիս, որ գոնե անկե լուր մը առնեի: Եվ ինչպես է Կատարինեի՞ առողջութիւնը, Սրբուհին կ'ըսեր, որ ան ալ տկար է. ոչ մեկ լուր չունեմ նույնպես Սրբուհին: Գալով ինծի՞ ի՛նչ ըսեմ՝ վարժապետութիւն կ'ընեմ, դասախոսութիւն կ'ընեմ, ժողովականութիւն կ'ընեմ, միայն չեմ ընիր ան, ինչ որ պետք է որ ընեմ: Ես ալ քեզի պես, շատ դժգոհ եմ ինծմե և միայն մեկ մտածում մը մի միայն ունիմ՝ փոխեմ նորեն կյանքիս պայմանները, որ գրել կարողանամ: Իհարկե առաջին մտածումս նորեն ձգիլ ու երթալն է, քաշվել Զվիցերիա մեր տունը ու լուրջ աշխատանքի նստել. դրամական դժվարութիւններ ունիմ առջևս, որը միշտ հույս ունիմ սակայն կերպով մը հարթելու. կը մնա անցագրի ու սուզանավի արժեքը՝ ան ալ տեսնենք՝ դեռ ամիսներ ունիմ առջևս: Այս պայմաններու մեջ լավ կ'ըլլար, որ «Լուսաբերի» գոնե ամենաէական գործը ընեինք ու վերցնեինք մեջտեղեն, եթե միայն հնարավոր է, թեև ինքս ալ չգիտեմ ճշմարիտ ե՛րբ և ինչպե՞ս: Զատկի ութը-տասը օրվան մեջ ի՞նչ կարելի է ընել, նույնիսկ տկարութիւնդ եթե արգելք ալ չըլլա: Նախորդ շաբաթները շատ անհանգիստ էի մերոնց մասին, վախ կար Զվիցերիայի շեղութիւն խախտումին. հիմա, կարծես նվազ հավանական է այդ փորձանքը. փոխարենը ուտելիքի ներմուծման դժվարութիւնն է հիմա. ատ ալ ուրիշ ցավ. նամակ կ'ըստանամ, թեև ոչ շատ հաճախ. ձեռքես ոչինչ չի գար. կը ջանամ փող հասցնելու: — Ներփակ գտնելու ես «Գուրգեն» խումբի հասցեին նամակը⁶², եթե ոչ— մեկ առարկութիւն չունիս քո կողմեդ, հանձնե Արեւլանին և պահանջե իրավունքս. ես կը հիշեմ, որ անցած տարի գավառական իր տուրների համար ալ շատ շնչին բան վճարեց. պետք չէ որ սովորութիւն դարձնես. ամենն կարճը, եթե համաձայն չէ իմ պայմաններու՝ արգելե՛ իմ խաղերուս ներկայացումը. չեն ուզեր վճարել, թող շխաղան: Հետո՞ կը խնդրեմ քեզնից հայտնե «Գրին», որ ինծի լրիվ հաշիվ մը տա վերջապես. երկու

տարի առաջ 15—20 կտոր զանազան գրքեր տվի իրեն ծախելու, իմ գրքերս կա իր մոտը, այլև նորը՝ «Կայսրը»։ Ի՞նչ է ծախված, ի՞նչ է մնացել։ Ինչքա՞ն առնելիք ունիմ իրենցմե։ վերջապես գիտնամ հաշիվս։ և եթե լուրջ գումար մը կա մեջտեղը՝ կարգադրեմ, որ փոխադրվի Զավոյին։ Մարդ չգիտե՞ ինչ կը պատահի վաղը, կը ջանամ գոնե քանի մը ամիսներու ապահովություն ունենան տանը. ով գիտե, հանկարծ կրնա հարաբերությունը կտրվի։ Այս վերջին երկու շաբաթը հոս էր, անշուշտ ինչպես գիտես, Բյուլետովը⁶³. առաջին ու վերջին դասախոսությունները միջակ, բայց շատ սիրուն էր «Ուսուցիչներու ուսուցիչը»։ Իհարկե հոս ամբողջ ժամանակը ձեռքե ձեռք, ճաշե ճաշ. սրտագին ու համակրալից վերաբերում երկու կողմեն⁶⁴. տարօրինակ ուսու է, այսինքն ավելի ճիշտ՝ եվրոպացի ուսու է, հոս է բոլոր գաղտնիքը։ Կարծեմ նորեն շատ գոհ հեռացան Բագունեն. այս առտու պետք է մեկնեին, չգիտեմ մեկնած են, թե ոչ։ Եթե մինչև այս նամակս քու մուզագ դեռ չէ եկած, նստե՛ գրելու առանց մուզայի, միայն թե գրե՛ ինձի անպատճառ. տեսնեմ՝ ի՞նչ բանի ես, ի՞նչ կ'ընես, տրամադրությունդ ինչպե՞ս է։ Իսկ Հանե՞սը. նորեն իր գրողներու ընկերությամբ՝ ամբողջ ժամանակը⁶⁵. գրողը տանի այդ գրողներն ալ, իրենց ընկերությունն ալ. փաստ՝ Հանես։ Դե, սիրելիս, բարևներս բոլորիդ ջերմ ու ջերմ. շատ համբույրներով՝ Կենդ

25

1917, փետր. 9, Բագու

Սիրելի՛ Ստեփա՛ն, ամառը Երևան⁶⁶ արևմտահայ ուսուցիչներու ներկայացուցիչները⁶⁷ կը խնդրեին ինձմե, որ մեր լուսարբերներու արևմտյան հրատարակությունը հասցնենք 1916—17 տարեշրջանի համար, ըսի իրենց, որ անկարելի է գլխավորապես կլիշեններու պատճառով և գրեթե խոստացեր էի առաջիկա տարվա համար։ Ահա նորեն դիմած են մեզի, ինչպես սխալ տեսնես ներփակ նամակեն։ Իմ խորին համոզումս է, որ թե՛ գործի և թե՛ մեր շահը կը պահանջե, որ անպատճառ մինչև հուլիս-օգոստոս ամիսները հրատարակած ըլլանք այդ շորս գրքերը։ Գլխավոր դժվարությունը թուղթն է և նոր կլիշեններ պատրաստելու անհրաժեշտությունը մանավանդ ձեռագիրներու համար այբբենարանի և առաջին ու երկրորդ տարվան համար (հողվածներու տակը մեկ-երկու տող արտագրության համար, ավելի փոքր ու կապակցված գրությամբ. այդ առիթով դեռ կը խոսենք, ուրիշ քանի մը կարևոր փոփոխություններ ալ ունիմ աչքի առաջ)։ Եթե ընդհանրապես համաձայն ես ինձի սկզբունքով, և եթե թուղթը ապահովել կրնաս, ինչպես և շնորհքով գեղագիր մը ու կլիշեններ պատրաստելու հնարավորությունը, այն ժամանակ ներփակ իմ Երևանի նամակս ուղարկիր իր հասցեին ապահովագրված։ Կը կարծեմ, որ առաջին տարին (այբբենարանի հետ միասին մեկ հատորի մեջ ամենաշատը 112 երես) առնվազն պետք է տպել 7000 օրինակ, երկրորդ տարին 5—6 հազար, երրորդը 2—3 հազար, հազար օրինակ ալ չորրորդ տարին։ Անշուշտ բոլորը նախապես պետք է նորեն խմբագրել, կարգի բերել, մանավանդ այբբենարանը, առաջին և երկրորդ տարիները, շարադրական նյութերու, հարցերու ու ձեռագիրներու հավելումով (առանձին գրքույկով «Գրավորի» փոխարեն, այս մասին ալ դեռ կխոսինք իհարկե)։ Պուլսի հրատարակության առաջին տարու նյութերու թեթևներն ու հարմարները կ'երթան այբբենարանին կցվելու, իսկ մյուս մասը կը միանա երկրորդ տարվան։ Այդ բոլորի վրա ես դեռևս լուրջ կը խորհիմ, կը որոշեմ, կը կատարեմ բոլոր, ինչ որ իմ խելքովս անհրաժեշտ է, ինչպես և քիչ մը սեղմեմ ու կ'արագացնեմ այբբենարանը և

այդ բոլոր նյութը հույս ունիմ, Զատկի տոնին կը ներկայացնեմ քեզի, վերջնական վավերացման ենթարկելու և ձեռագիրները պատրաստել տալու համար, որ կլիշենները շինվին. կամ դուն պիտի գաս Բագու, կամ ես Քիֆլիս, ինչպես հարմար կը գտնես. թե հարկ եղավ, ինչպես որ կը կարծեմ, պատրաստ եմ տպագրութեան գլխուն կայնելու մայիսի վերջերեն սկսած ամսրվան մը շափ, այդ միջոցին կրնանք և արևելյանի վերջնական խմբագրումը կատարեր, միայն կը վախնամ նախ քու առողջութենեդ և երկրորդ քու դրպրոցիդ զբաղումներեն, քննութիւններուդ խառնակ ատենն է. վերջապես գրե՛ ինծի քու կարծիքը, ամեն կերպով կը համակերպիմ այդ «լուսաբերներու» հոգը վերջնապես ուսերես անդին նետելու համար, գոնե հինգ-վեց տարով: — Քանի մը օր առաջ քեզի նամակ եմ գրած, կը հուսամ առած ես: Կը խընդրեմ, որ ինծի հայտնես իմ բարերար Զուրարովի⁶⁸ անուն ու հայրանունը, հիմա կողան է, կ'ուզեմ իրեն «Կայսր» ուղարկեմ, և չեմ գիտեր անունը. իսկ ո՞ւր է Ղամբարյանը⁶⁹ հիմա, անոր ալ դուն բարի եղիր ու իմ կողմես ուղարկե, եթե անհարմար չես գտնիր քեզի համար: Կ'ըսպասեմ լուրերուդ ու պատասխանիդ. Բարև ու համբույր. Լևոնդ

Երևանի նամակը կ'ուղարկես «Աշխատանք» թերթի հասցեով հանձնելի արևմտահայ ուսուցչութեան ներկայացուցիչ մարմնին: Ուղարկե նամակը ապահոված:

26

1917, մարտ 22, Բագու

Ստեփան՝ն ջան, կը խնդրեմ, որ Զավոյին հեռագրով փոխադրես վեց հարյուր ռուբլի. եթե այդչափը անմիջապես անկարելի է, գոնե որչափ որ կարող ես. ես ալ հոսկե փոխադրած եմ այդչափ մը. կը վախնամ, որ մի գուցե փոխադրութեան արդի դյուրութիւնները խանգարվեն շուտով. եթե հնար է փոխադրե մինչև Զատիկ: Արտիստիկականեն⁷⁰ չեմ ստացած «Կայսեր» երկրորդ ներկայացման վճարը. «Կիրն» ալ ունի բավական գումար վճարելու «Կայսեր» և մյուս գրքերու վաճառումեն, մնացածն ալ լրացուր «լուսաբերներու» իմ հաշվեն: Զավոյի հասցեն գիտես՝ Djavo Segbossian, Avenue Druey 24, Lusanne. — իմ երկու նամակներու մինչև հիմա դեռ պատասխանը չի տրվիր, ամիսը շուտով պիտի լրանա. մեկի մեջ դրած էի նամակ մը Արեւելյանի համար, ինչպես որ ինծի հանձնարարած էիր. երկրորդին մեջ զրկած էի քեզի Երևանի արևմտահայ ուսուցչական մարմնի կողմեն եղած դիմում մը մեզի՝ լուսաբերները շուտով արևմտահայ լեզվով տպելու, նամակին մեջ դրեք էի նաև իմ պատասխանս մեր կողմեն, որ ուղարկելու էիր Երևան, եթե քեզի գրած նամակիս պարունակութեանը համաձայն էիր. չգիտեմ, նամակները ըստացած ես, թե ոչ: Նմանապես պետք է վճռել՝ ի՞նչ ենք ընելու «լուսաբերներու» վերջնական խմբագրութեան վերաբերմամբ, մայիսի կեսերուն ես հոս կազատվիմ, գամ անմիջապես Քիֆլի՞զ, թե ինչպես. գրե, որ ատոր համեմատ կարգադրեմ ժամանակս. կը մտածեմ, որ քու դպրոցդ ալ այս գարնան երևի շուտ կը փակվի և քննութեան արարողութիւնները այս տարի ծանր ու շատ հոգնեցուցիչ շեն ըլլար բարեբաղդաբար: Կը հուսամ, որ առողջութիւնդ ավելի լավ է հիմա, և այս ամառ պետք է լուրջ քեզի խնամելու մասին մտածես: Կը շնորհավորեմ քեզի՝ ոուս քաղաքացիդ «քու բոլոր նոր» ազատութիւններովդ⁷¹ ու սրտագին կը համբուրեմ: Զերմ բարեբերս տիկին Կատարինեին ու Լևոնիդ.

Լևոն Շանթ

1917, դեկտեմբեր 7, Պետրոկրատ

Սիրելի՛ Ստեփանս, գիտեմ որ դարմացած ես քիչիկ մը լուսթյանս վրա կամ նամակս կորած կը կարծես: Ո՛չ. չգրեցի, որովհետև սկիզբը ամեն ինչ շափազանց էր խառնակ, իսկ վերջերս ալ, որ օրն օր ճամփա իյնալու վրա եմ և զանազան թուլլտուլթյուններու ու վիզաններու հետ կը մաքառեմ, ուզեցի վիճակս վերջապես որոշվի, որ գրեմ: Վաղը առավոտ Պետրոկրատեն կը մեկնիմ վերջապես և Սկանտինապեն մեկ-երկու տող կը գրեմ քեզի նորեն:

Մոսկվա էի հեղափոխութեան տաք օրերուն, Ամիրջանի տանն էի, Ատոնցի⁷² հետ. մեր հեռանալուն պես՝ հաջորդ օրը սկսած պատերազմը⁷³. մեզի շէին ուզեր թողնին, լսելով, որ Պետրոկրատը անապատով է: Հոս «պատերազմ» շունեցանք փողոցներու մեջ. բայց հրացաններու տրար-տրաքոցը այս ու այն անկյունեն, ըլլա գիշեր, թե ցերեկ շատ հաղվաբեպ բան չէ, դանազան պատճառներով, իսկ վերջերս կապված գինիի մառսաններու թալանի և հարբեցողութեան հետ. բայց մարդ անասունը, ինչպես որ գիտես, կը վարժվի ամեն բանի: Մեկ կողմեն իհարկե շատ դժգոհ եմ, որ այսբան ստիպվեցա հոս մնալու, բայց մյուս կողմեն ալ անշուշտ շափազանց հետաքրքիր օրեր ու դեպքեր են, որ մարդ ուզե-չուզե կապրի միասին: Այս շորս-հինգ շաքաթ-վան մեջ աչքիս առաջնն ամբողջ պատմութիւն մըն է անցած. և ես որ ոչ մեկ համալսարան ո՛չ մեկ քննութիւն չեմ սոված, հիմա ինձի կը թվի, որ հոս մարդկային պատմութեան քննութիւնն է, որ կու սամ⁷⁴. և քանի որ դիպլոմս երեկ ու առաջի օրը ստացա շվետական, անգլիական, ֆրանսիական, իրանական և Սմոլնիան դեսպանատուններեն՝ ալ հանգիստ խղճով կըրնամ մեկնիր:

Իսկ Կովկասը հիմա ինձի քիչ մը դժվար կը պատկերացնեմ. չէ՞ որ հոս ալ շատ բան է փոխված. «Պետերբուրգցիներու» համար դուք դարձեր եք արտասահման. երեք պետութիւն, չգիտեմ քանի հասարակապետութիւն պետք է անցնել տեղ հասնելու համար. իհարկե շահովելով լեռնցիներու հարձակումը, Ռոստովի ճակատամարտերը և վակոններու մէջ կատարվող վանտալութիւնները հարձակվող ու պաշտպանվող, սրվող ու փախչող դիմվորութիւններուն կողմեն: Կատարյալ միջնադար-ուղեւնայա սիստեմա. և կարծեմ արդեն հասեր ենք վարեակները⁷⁵ կանչելու վայրկյանին: Այս բոլոր հեղափոխութիւններուն և կոտորածներուն անմասն շմնաց իհարկե և իմ գրպանս. բուպլին եվրոպական դրամի վերածելիս կ'արժեր 10—15 կոպեկ: այս քանի օրը 5—10 կոպեկ ավելի բարձրացեր է, դժբախտաբար քիչիկ մը ուշ: Հիմա անհամբեր կ'ըջտապիմ սահմանը անցնելու, որ Զավոյին լուր հասցնեմ ու դրամ. հույս չունեմ որ նամակներս ստացած ըլլա և հիմա շափազանց անհանգիստ վիճակի մեջ է երևի թե՛ իմ մասին, թե՛ իր մասին: Երկու օր առաջ Ռոստովը եկավ Ստոքոլմեն. Զավոն երկու ամսվան շափ առաջ անոր նամակ է գրեր հայտնելով, որ կ'ըսպասե ինձի և որ ձեռքը դրամ չունի:

Դե՛, սիրելի՛ս, մնաս բարով. վերջին բարեւ քեզի ու քուկիներուդ ռուսական հողեն: Տեսնենք ի՞նչ պայմաններու մեջ ու ի՞նչ հոյսերով կամ բեկումով նորեն այդ հողին վրա ոտք դնելու՝ անցնելու համար մե՛ր հողին:

Կը ցանկամ հաջողութիւն ու առողջութիւն քեզի ու Կատարինեին. ու կարոտով կը համբուրեմ Լեոնը, Սրբուհին ու Նազիկը. հաճախ ու սիրով կը հիշեմ մեր միասին անցուցած ամառը. իրա՛վ որ սիրուն անկյուն էր Ցակվերին⁷⁶:

Զերմ համբուրով՝ Լեոն

- 1 Խոսքը Նոր Նախիջևանի մասին է:
- 2 **Հակոբ Խաչատրյան (1884—1960)**— Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ: Այդ թվերին Նոր Նախիջևանի թեմական դպրոցում պատմություն և լատիներեն է դասավանդել:
- 3 Գևորգ Չոլբարը «Հին աստվածները» ուսերեն է թարգմանել 1913 թ. ապրիլին, Մոսկվայի Գեղարվեստի թատրոնի պատվերով: Կ. Մարջանովը թեմադրել է Կարա-Ռեր-վիշի (Հ. Գեմջյան) թարգմանությունը:
- 4 **Մարջանով (Մարջանիշվիլի) Կոնստանտին (1872—1988)**— Խորհրդային թատերական արվեստի ակադավոր գործիչ, ռեժիսոր:
- 5 Բ. Հարությունյանի աշխատասիրության մեջ հիշվում է **Գրիշին ձևով (Տե՛ս նրա «XIX—XX դարերի հայ թատրոնի տարեգրություն», հ. 3, Եր., 1981, էջ 180)**:
- 6 Այդ աշխատանքը կատարել է Մարտիրոս Սարյանը:
- 7 Առաջին ներկայացումը կայացել է 1914 թ. սեպտեմբերի 11-ին և արժանացել մամուլի բարձր գնահատականին:
- 8 **Ստեփան Քափանական (1877—1944)**— Ռեժիսոր, թատերական գործիչ, մանկավարժ: Նրա թարգմանությունը մեզ հայտնի չէ:
- 9 Հավանաբար խոսքը վերաբերում է Թիֆլիսի և Բաքվի ուսական դերասանական խմբերի թեմադրած թարգմանություններին: Թիֆլիսում՝ Մաժակի (Վ. քառ. Տեր-Ղևոնդյան) և Յակ. Խստիճովի (Մշմարիտյան), Բաքվում՝ Տիգրան Բեգադյանի:
- 10 **Կատարիներ Լիսիցյան**— Ստ. Լիսիցյանի կինը: Ամուսնուն գործակցել է թե՛ «Հասկեր» մանկական ամսագրի խմբագրման-հրատարակման գործում և թե՛ մասնավոր գիմնազիայի աշխատանքները վարելիս:
- 11 Իր ընկերոջը՝ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանին Ծանթը մտերմորեն կոչել է Օհանես կամ Հանես ձևերով:
- 12 Ստ. Լիսիցյանի որդին է:
- 13 **Ջավո Ներսիսյան**— Ծանթի կինը: Ստացել է բարձրագույն կրթություն, թղթակցել է Կովկասի մանկական մամուլին:
- 14 **Սրբոսի Լիսիցյան (1898—1979)**— Ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր: Ստ. Լիսիցյանի ավագ դուստրը:
- 15 **Նազելի Լիսիցյան (1906—1985)**— Տնտեսական գիտությունների դոկտոր: Ստ. Լիսիցյանի կրտսեր դուստրը:
- 16 Նավագնացության ընկերություն: Գրել է նաև **Միսածոր ձևով**:
- 17 Թուրքիան համաշխարհային պատերազմի մեջ է մտել 1914-ի հոկտեմբերին:
- 18 Կնոջ՝ Ջավոյի եղբայրը:
- 19 Վարկը բաց է թողնվել Ջավոյի անունով եղած արժեթղթերի դիմաց:
- 20 **Ալեքսանդր Արեյան (1858—1940)**— Գրող, հրապարակախոս, թատերական գործիչ:
- 21 Ծանթի առաջարկով «Նուսաբերի» արևելահայ և արևմտահայ տարբերակների դրամական հաշիվները առանձին են պահվել:
- 22 «Ժողովրդական գրավաճառանոց» Կ. Պոլսում:
- 23 Տե՛ս ծան. 19:
- 24 «Հասկեր» մանկական պատկերազարդ ամսագիրը լույս է տեսել 1907—1922 թթ.: Խմբագիր-հրատարակիչներ՝ Կ. Լիսիցյան և Ս. Լիսիցյան:
- 25 «Ուղեցույցում» պարզաբանվել են նախապատրաստական տարում գրել-կարդալ սովորեցնելու եղանակները:
- 26 Զհաջողվեց պարզել՝ ինչ հողերի մասին է խոսքը:
- 27 Խոսքը «Կայսր» դրամայի մասին է:
- 28 Տե՛ս նախորդ ծանոթագրումը:
- 29 Հավանաբար նկատի ունի ազատագրական տրամադրությունների վերելքն ու կամավորական շարժումը:
- 30 Գրական, հասարակական, տնտեսական և քաղաքական օրաթերթ, դաշնակցական կուսակցության օրգան:
- 31 Վանը ուսական գորքերի ու հայ կամավորների կողմից գրավվել է 1915 թ. մայիսի 9-ին:
- 32 Խոսքը Ստ. Լիսիցյանի մասնավոր գիմնազիայի մասին է:
- 33 1915 թ. հունվարի 25-ի համարում տպվել է «Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկվայի ցարի ընծաների փոխարեն» սերբական ժողովրդական վիպերգը Հովհ. Թումանյանի թարգմանությամբ:
- 34 Այս փաստով սրբագրվում է կենսագիրների այն պնդումը, թե Ծանթը ցանկացել է կամավոր դառնալ:

35 **Մեսրոպ եպ. Տեր-Մովսիսյան (1864—1939)**— Էջմիածնի միաբան, բանասեր: Այդ տարիներին եղել է Թիֆլիսի հայկական թեմի առաջնորդ:

36 **Ալեքսանդր Խատիսյան (1874—1945)**— Դաշնակցություն կուսակցության գործիչ, 1909—1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքագլուխը: Հեղինակել է «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գիրքը:

37 Լ. Ծանթի ծննդյան թիվը ընդունված է 1869-ը:

38 Լ. Ծանթի միջնեկ որդին. իր կնոջ հետ գոհվել է Երկրորդ աշխարհամարտին, Բեռլինի ուժեղացման ժամանակ:

39 Հավանաբար խոսքը վերաբերում է Միքայել Բաբաջանյանին (1872—1926)— Իրավաբան, հասարակական գործիչ, 1912 թ. IV պետական դումայի անդամ:

40 Տե՛ս ծան. 19:

41 Տպագրվել է «Русская мысль», Москва и Петроград, 1915, № 9-ում:

42 Խոսքը «Կայսր» դրամայի մասին է: Նախկին վերնագիրը եղել է «Նոր Հոռոմ»:

43 Արթուրյանը բնակվել է Բաքվում:

44 Կարինը ուսական գործերի ու հայ կամավորների կողմից գրավվել է 1916-ի փետրվարի 16-ին: Նկատի ունի Վանի հետ կապված ողբերգությունը՝ հետևանք ուսական գործերի անգամափոխ անհանջի:

45 **Թորոս Թորամանյան (1864—1984)**— Ծարտարապետ, հայ մշակույթի երախտավոր: Նրա հետազոտությունները՝ «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» խորագրով, 1942 և 1948 թվերին լույս են տեսել երկու մեծածավալ հատորներով:

46 **Տիգրան Հովհաննիսյան (1865—1921)**— Թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան: Այդ թվերին եղել է Բաքվի Գրասիրաց ընկերության նախագահը:

47 Տիգրան Բեգաղյանը եղել է Հովհ. Թումանյանի, Ստ. Լիսիցյանի և Լ. Ծանթի մտերիմներից:

48 Ռուսացումի Հեղինե Մելիք-Հակոբյանը Տ. Բեգաղյանի կինն է: Եղել է Հովհ. Թումանյանի և Ծանթի տաղանդի երկրպագուներից:

49 Խոսքը դաշնակցական կուսակցության Բաքվի բյուրոյի մասին է:

50 **Նիկոլ Աղբալյան (1878—1947)**— Հասարակական-քաղաքական և մշակույթի գործիչ, ականավոր քննադատ:

51 **Նիկողայոս Մառ (1864—1984)**— Արևելագետ, հայագետ, ակադեմիկոս: Կազմակերպել ու ղեկավարել է Անիի հնագիտական արշավախումբը:

52 Այս ուսումնառությունը, անշուշտ, Սրբուհի Լիսիցյանին օգնել է հետագայում հայ մոլորդական պարերն հետազոտելիս:

53 Հաշվարկը զարմանալի ճշգրիտ է: Տպագիր «Կայսրը» ծավալով հավասարվել է «Հին աստվածների» 96 էջին:

54 Կուսակցության համագումարը տեղի է ունեցել Պետերբուրգում, ուր և ընկերները խոսել են ամագիր հրատարակելու թեմայով:

55 Ավետյանը եղել է «Գիր» գրավանառանոցի տնօրենը:

56 Ի նկատի ունի Տիգրան Բեգաղյանի և Հեղինե Մելիք-Հակոբյանի ընտանիքը:

57 Հավանաբար այդ թարգմանությունը չի հրատարակվել:

58 Խոսքը վերաբերում է Բաքվի Գրասիրաց ընկերության մեջ ունեցած աշխատանքին:

59 Բաքվում հրատարակվող գրական, հասարակական և քաղաքական օրաթերթ (1914—1919 թթ.):

60 «Կայսրի» մասին է խոսքը:

61 Խոսքը բանասեր, հասարակական գործիչ ու հրատարակիչ Գյուտ ք. Աղանյանի (1856—1920) մասին է: Տպարանը եղել է դստեր՝ Նվարդ Աղանյանի անունով:

62 Հավանաբար Լիսիցյանը նպատակահարմար է գտել գրության բովանդակությունը բանավոր փոխանցելու: Այն բերում ենք ամբողջությամբ.

«Գուրգեն» դերասանական խմբի հարգելի վարչության

Մեծապատիվ պարոն Արեվյան,

Ստեփան Լիսիցյանի միջոցով ստացա ձեր վճարած ութսուն և հինգ րուբլին, իբրև վճար «Հին աստվածներու» մեկ ներկայացման, որը սակայն, ինչպես կ'իմանամ, մուտքեն ինձի հասնելիք տասը տոկոսը չէ, այլ ավելի պակաս:

Ամեն թյուրիմացություն մեջտեղեն վերցնելու համար՝ պարտք կը համարեմ ինքս անձամբ ձեզի գրելու, որ իմ հին պիեսները ներկայացնելու համար, ո՛րք ալ որ ըլլա այդ ներկայացումը և որո՛ւ ձեռքով ալ որ ըլլա, հոնորարը տասը տոկոս է. իսկ նոր պիեսի համար Թիֆլիզ ու Բաքու առաջին ներկայացմանը 20 տոկոսը, հաջորդ ներկայացումներու 15 տոկոսը, գավառական մյուս քաղաքներու համար միշտ 10 տոկոս:

Այնպես որ, հարգելի պարոն Արեվյան, կը խնդրեմ բարի ըլլաք լրացնելու այդ 85

րութիւն մնացած թերի՞ն ու Ստ. Լիսիցյանի հետ փակեք այդ մանր հաշիվը, ինչպէս և նույնը աչքի առաջ ունենաք ձեր առաջիկա վճարումներու ժամանակ:

Ընդունեցե՛ք խնդրեմ խորի՞ն հարգանքս ու քարկներս: Կը ցանկամ հաջողութիւն ձեր աշխատանքին. Լևո՞՞ Շանթ

1917 փետր. 5

Բագու

83 Վալերի Բրյուսովը հայ գրականության թեմաներով հաքվում զեկուցումներ է կարդացել 1915-ի դեկտեմբերի վերջերին և 1916-ի հունվարի 8-ին:

84 Նկատի ունի Բաքվի հայ և ռուս համայնքները:

85 Կովկասի հայ գրողների ընկերությունը կազմակերպվել է 1912 թ.: Նախագահ է ընտրվել Հովհ. Թումանյանը:

86 Երևանում «գրական դասախոսություններով» հանդես գալու մասին խոսում է 1916 թ. հոկտեմբերի 12-ի նամակում:

87 Ամենայն հավանականությամբ «լուսաբերների արևմտյան հրատարակության» ամբողջաձեռնության հարցը բարձրացվել է արևմտահայ ուսուցիչների առաջին համագումարում, որ կայացել է 1917-ի հունիսի 16-ին, Երևանում:

88 Նամակներում հիշվում է նաև Ջոհրաբյան ձևով: Լիսիցյանի շնորհիվ Շանթի ուսանողական կյանքում կարևոր դեր կատարած բարերար:

89 Ղամբարյանը, ինչպէս Ջոհրաբյանը, ուսանող Շանթին դրամական օգնություն են հասցրել Վարշավայից:

90 «Վայսրը» առաջին անգամ բեմադրվել է 1916-ի դեկտեմբերի 12-ին, Դրամատիկական ընկերության կողմից, Թիֆլիսի Արտիստական թատրոնում:

91 Ակնարկում է 1917-ի բուրժուա-ժողովրդավարական հեղափոխության շնորհած քաղաքացիական իրավունքները:

92 Նիկողայոս Ադոնց (1871—1942)— Հայ մեծ պատմաբան, քանասեր, քյուզանդագետ:

93 Խոսքը հոկտեմբերյան հեղափոխության մասին է:

94 Կասկածից վեր է, որ «Շղթայվածը» հղացվել է այս դեպքերի ազդեցությամբ:

95 Նորմանական ավարտուններ:

96 Առողջարանային քաղաք Վրաստանում:

Х. Г. ВАРТАНЯН—Письма Левона Шанта Степану Лисициану.— Левон Шант и Степан Лисициан сблизились еще в Геворкянской семинарии: между студентом—начинающим поэтом, и учителем—почти его ровесником, возникает глубокое взаимопонимание, которое вскоре переходит в долголетнюю дружбу, о чем свидетельствует продолжительная переписка (1896—1917). Публикуемые письма написаны в 1914—1917 гг. и имеют большое культурно-историческое и научное значение.